03/03/2005
համար 93 Ն

,ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ,ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸԵ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 15-Ը ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սույն կանոնակարգում ներառված է ՀՀ ԿԲ խորհրդի 21.11.06թ. թիվ 691 Ն,29.05.07թ. թիվ 154 Ն, 26.02.08թ. թիվ 51 Ն, 04.11.08թ. թիվ 298-Ն, 18.11.08թ. թիվ 313-Ն, 02.06.09թ. թիվ 158-Ն, 02.06.09թ. թիվ 166-Ն, 08.09.09թ. թիվ 268-Ն, 22.09.10թ. թիվ 241 Ն, 21.12.10թ. թիվ 343 Ն, 30.11.2011թ. թիվ 326 Ն, 06.12.11թ. թիվ 332 Ն, 29.05.12թ. թիվ 145 Ն, 06.11.12թ. թիվ 296 Ն որոշմամբ կատարված փոփոխությունները

Կանոնակարգը փոփոխվել է՝

Հիմք ընդունելով «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածները, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո ր ո շ ո ւ մ է.

1. Հաստատել «Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 15-ը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 1-ի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի դեկտեմբերի 13-ի ««Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 15-ը հաստատելու մասին» թիվ 407 Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2005 թվականի հունիսի 1-ից:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ **Տ. Սարգսյան**

Հավելված 1

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 15

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

ԳԼՈՒԽ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանված է համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի և կարգավորում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ (այսուհետև՝ Կենտրոնական բանկ) ներկայացվող հաշվետվությունների ձևերը, ներկայացման կարգն ու ժամկետները:

ԳԼՈՒԽ II. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Վարկային կազմակերպությունները, բացառությամբ սույն կանոնակարգի 3-րդ կետով սահմանված վարկային կազմակերպությունների, Կենտրոնական բանկ են ներկայացնում հաշվետվությունների հետևյալ ձևերը՝ նշված պարբերականությամբ.

	Հաշվետվության անվանումը	Հաշվետվության համարը	Ներկայացման հա-ճախականությունը
1	Հաշվեկշիռ	1	ամսական, տարեկան
2	Հաշվետվություն հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ	3	ամսական
3	Հաշվետվություն վարկային կազմակերպության եկամուտների և ծախսերի վերաբերյալ	5	ամսական, տարեկան
4	Հաշվետվություն վարկային ներդրումների, դեբիտորական պարտքերի և ինվեստիցիոն արժեթղթերի վերաբերյալ	6	ամսական
4.1	Հաշվետվություն արտարժութային դիրքերի վերաբերյալ	7	ամսական
5	Հաշվետվություն ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետայնությունների վերաբերյալ	9	եռամսյակային
6	Հաշվետվություն կանոնադրական կապիտալի ձևավորման վերաբերյալ	10	յուրաքանչյուր փոփոխության դեպքում

7	**(7-րդ կետը հանվել է 04.11.08թ. թիվ 298 Ն որոշմամբ)**		
8	Հաշվետվություն դրամարկղային շրջանառության վերաբերյալ (ամփոփ և ըստ մասնաճյուղերի)	13	ամսական
9	Հաշվետվություն նախորդող շաբաթվա ընթացքում ներգրավված և տեղաբաշխված միջոցների միջին տոկոսադրույքների վերաբերյալ	17	շաբաթական
10	Հաշվետվություն ոչ ռեզիդենտնետի հետ իրականացված գործառնությունների և ոչ ռեզիդենտների հետ ֆինանսական դիրքերի վերաբերյալ	18	եռամսյակային
11	Հաշվետվություն արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների վերաբերյալ	19	օրական
12	Վարկային կազմակերպության կողմից մատուցված վճարային ծառայությունների և վճարային գործիքների վերաբերյալ	20	եռամսյակային
13	Հաշվետվություն արժեթղթերի թողարկման արդյունքների վերաբերյալ	21	յուրաքանչյուր թողարկման համար
14	Հաշվետվություն վարկային կազմակերպության կողմից թողարկված արժեթղթերի և կատարված ներդրումների վերաբերյալ	22	տարեկան
15	**15-րդ կետը (հանվել է 04.11.08թ. թիվ 298 Ն որոշմամբ)**		
16	Հաշվետվություն վարկային կազմակերպության աշխատակազմի վերաբերյալ	28	եռամսյակային
17	Հրապարակվող հաշվետվություն տնտեսական նորմատիվների վերաբերյալ	30	եռամսյակային
18	Հաշվետվություն ռեզիդենտներից ներգրավված փոխառությունների վերաբերյալ	31	տարեկան
19	Հաշվետվություն արժեթղթերի երկրորդային շուկայում իրականացված գործառնությունների վերաբերյալ	32	օրական
20	**(20-րդ կետը ուժը կորցրել է 29.05.12թ. թիվ 145 Ն որոշմամբ)**		

Գործունեության տեսակը փոփոխող վարկային կազմակերպությունը Կենտրոնական բանկի կողմից գործունեության տեսակի փոփոխման նախնական համաձայնությունը ստանալուց հետո Կենտրոնական բանկ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի ,,Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը կանոնակարգ 3-ը հաստատելու մասինե թիվ 50-Ն որոշմամբ հաստատված ,Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը կանոնակարգ 3-ով (այսուհետ՝ Կանոնակարգ 3) սահմանված թիվ 3 և թիվ 7 հաշվետվությունները:

Սույն կետով սահմանված հաշվետվություններից բացի, վարկային կազմակերպությունները պարտավոր են Կենտրոնական բանկի պահանջով ներկայացնել լրացուցիչ հաշվետվություններ:

(2-րդ կետը լրաց., փոխ. 04.11.08թ. թիվ 298Ն, լրաց. 02.06.09թ. թիվ 158Ն, խմբ. 08.09.09թ. թիվ 268Ն, խմբ. 21.12.10թ. թիվ 343Ն, լրաց. 06.12.11թ. թիվ 332Ն, փոխ. 29.05.12թ. թիվ 145Ն)

3. Վարկային կազմակերպությունները, որոնք Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի նոյեմբերի 5-ի թիվ 347 Ն որոշմամբ հաստատված «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ի (այսուհետև՝ կանոնակարգ 14) 12.1 կետով սահմանված կարգով, իրենց կանոնադրության համաձայն հրապարակային օֆերտաների միջոցով չեն ներգրավում փոխառություններ, Կենտրոնական բանկ են ներկայացնում հաշվետվությունների հետևյալ ձևերը՝ նշված պարբերականությամբ.

	Հաշվետվության անվանումը	Հաշվետվության համարը	Ներկայացման հա-ճախականությունը
1	Հաշվեկշիռ	1	ամսական, տարեկան
2	Հաշվետվություն ընդհանուր կապիտալի նորմատիվի վերաբերյալ	3.1	ամսական
3	Հաշվետվություն վարկային կազմակերպության եկամուտների և ծախսերի վերաբերյալ	5	ամսական, տարեկան
4	Հաշվետվություն վարկային ներդրումների, դեբիտորական պարտքերի և ինվեստիցիոն արժեթղթերի վերաբերյալ	6	ամսական
4.1	Հաշվետվություն արտարժութային դիրքերի վերաբերյալ	7	ամսական
5	Հաշվետվություն ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետայնությունների վերաբերյալ	9	եռամսյակային
6	Հաշվետվություն կանոնադրական կապիտալի ձևավորման վերաբերյալ	10	յուրաքանչյուր փոփոխության դեպքում
7	**(7-րդ կետը հանվել է 04.11.08թ. թիվ 298 Ն որոշմամբ)**		
8	Հաշվետվություն դրամարկղային շրջանառության վերաբերյալ (ամփոփ և ըստ մասնաճյուղերի)	13	ամսական
9	Հաշվետվություն նախորդող շաբաթվա ընթացքում ներգրավված և տեղաբաշխված միջոցների միջին տոկոսադրույքների վերաբերյալ	17	շաբաթական
10	Հաշվետվություն ոչ ռեզիդենտների հետ իրականացված գործառնությունների և ոչ ռեզիդենտների հետ ֆինանսական դիրքերի վերաբերյալ	18	եռամսյակային
11	Հաշվետվություն արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների վերաբերյալ	19	օրական
12	Վարկային կազմակերպության կողմից մատուցված վճարային ծառայությունների և վճարային գործիքների վերաբերյալ	20	եռամսյակային

13	Հաշվետվություն արժեթղթերի թողարկման արդյունքների վերաբերյալ	21	յուրաքանչյուր թողարկման համար
14	Հաշվետվություն վարկային կազմակերպության կողմից թողարկված արժեթղթերի և կատարված ներդրումների վերաբերյալ	22	տարեկան
15	Հաշվետվություն վարկային կազմակերպության աշխատակազմի վերաբերյալ	28	եռամսյակային
16	Հրապարակվող հաշվետվություն տնտեսական նորմատիվների վերաբերյալ	30	եռամսյակային
17	Հաշվետվություն ռեզիդենտներից ներգրավված փոխառությունների վերաբերյալ	31	տարեկան
18	Հաշվետվություն արժեթղթերի երկրորդային շուկայում իրականացված գործառնությունների վերաբերյալ	32	օրական
19	**(19-րդ կետը ուժը կորցրել է 29.05.12թ. թիվ 145 Ն որոշմամբ)**		

Գործունեության տեսակը փոփոխող վարկային կազմակերպությունը Կենտրոնական բանկի կողմից գործունեության տեսակի փոփոխման նախնական համաձայնությունը ստանալուց հետո Կենտրոնական բանկ է ներկայացնում Կանոնակարգ 3-ով սահմանված թիվ 3 և թիվ 7 հաշվետվությունները:

Սույն կետով սահմանված հաշվետվություններից բացի, վարկային կազմակերպությունները պարտավոր են Կենտրոնական բանկի պահանջով ներկայացնել լրացուցիչ հաշվետվություններ:

(3-րդ կետը լրաց., փոխ. 04.11.08թ. թիվ 298Ն, լրաց. 02.06.09թ. թիվ 158Ն, լրաց. 08.09.09թ. թիվ 298Ն, խմբ. 21.12.10թ. թիվ 343Ն, լրաց. 06.12.11թ. թիվ 332Ն, փոխ. 29.05.12թ. թիվ 145Ն)

ԳԼՈՒԽ III. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

4. Վարկային կազմակերպությունները հաշվետվությունները, ծանուցումները, կից տեղեկանքները, բացառությամբ «Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 15-ի հավելված 1-ի (այսուհետ՝ հավելված 1) ձև թիվ 30-ի, ներկայացնում են «Սի Բի էյ Նեթ» համակարգի միջոցով կամ էլեկտրոնային կրիչների վրա՝ Կենտրոնական բանկի կողմից տրամադրվող ֆայլերին համապատասխան: Հաշվետվությունները Կենտրոնական բանկ են ներկայացվում Կենտրոնական բանկի վիճակագրության վարչության հաշվետվությունների ընդունման և ամփոփման համար պատասխանատու բաժնի կողմից վարկային կազմակերպություններին ուղարկված պաշտպանված ֆայլերով, որոնց փոփոխումն արգելվում է: Այլ կերպ ներկայացված հաշվետվությունը համարվում է չընդունված:

Հաշվետվություններում նշվում են հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա ամսաթվերը (օրինակ՝ շաբաթական հաշվետվություններում նշվում է կիրակի օրվա ամսաթիվը, իսկ ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններում՝ ամսվա վերջին օրվա ամսաթիվը: Ամսաթիվը նշվում է հետևյալ ֆորմատով՝ օր. ամիս. տարի (օրինակ՝ 31/01/2001):

Սույն կետով սահմանված պահանջներին համապատասխան Կենտրոնական բանկի կողմից ընդունված հաշվետվությունները, ծանուցումները, կից տեղեկանքները հանդիսանում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածով սահմանված գրավոր ապացույցներ:

Վարկերի ու դեբիտորական պարտքերի (հետհաշվեկշռային պարտավորությունների) և ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստները սույն կանոնակարգով սահմանված հաշվետվություններում արտացոլվում են, (իսկ հաշվետվություններում ներկայացվող հիմնական տնտեսական նորմատիվների և չբաշխված շահույթի հաշվարկում ընդգրկվում են) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 1999 թվականի ապրիլի 23-ի թիվ 63 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 1998 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 188 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման» կարգերին համապատասխան հաշվարկված գումարների չափով:

Սույն կանոնակարգի իմաստով՝ ակտիվի կամ պարտավորության *համախառն հաշվեկշռային մնացորդ (արժեք) է* համարվում վերջինիս գծով հաշվեկշռում գրանցված գումարը, ներառյալ՝ տոկոսները, տույժերը և տուգանքները, առանց նրա գծով ձևավորված պահուստի, կուտակված ամորտիզացիայի կամ արժեզրկման նվազեցման, եթե այդպիսիք կան:

Սույն կանոնակարգի իմաստով՝ ակտիվի կամ պարտավորության *հաշվեկշռային մնացորդ* է համարվում նրա համախառն հաշվեկշռային մնացորդը նվազեցրած նրա գծով ձևավորված պահուստը, կուտակված ամորտիզացիան և արժեզրկումը, եթե այդպիսիք կան:

(4-րդ կետը խմբ. 26.02.08թ. թիվ 51Ն, լրաց. 08.09.09թ. թիվ 268Ն, փոխ. 29.05.12թ. թիվ 145Ն)

5. Վարկային կազմակերպությունները հաշվետվությունները էլեկտրոնային փոստով կամ էլեկտրոնային կրիչների վրա ներկայացնելիս ֆայլերը կոդավորում են՝ համաձայն Կենտրոնական բանկի կողմից ստացված կոդի:

Ֆայլի կոդն ունի հետևյալ կառուցվածքը.

Վարկային կազմակերպության կոդը	Գծիկ	Հաշվետվության համարը	Կետ	Հապավումը
60100	-	v01	.	xls

6. Թիվ 1 հաշվետվությունը կազմված է մեկ էջից և լրացվում է հազար դրամներով, առանց տասնորդական միավորների:

,I խմբի արտարժույթե և ,II խմբի արտարժույթե սյունակներում արտարժույթի խմբավորումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի նոյեմբերի 5-ի ,,Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվներըե կանոնակարգ 14-ը հաստատելու մասինե թիվ 347-Ն որոշման (այսուհետև՝ Կանոնակարգ 14): ,I խմբի արտարժույթե, ,II խմբի արտարժույթե սյունակներում լրացվում են Կանոնակարգ 14-ով սահմանված արտարժութային դիրքի հաշվարկի մեջ մասնակցող բանկի արտարժույթով ակտիվների և պարտավորությունների մնացորդները, ինչպես նաև արտարժութային ռիսկ պարունակող ակտիվների և պարտավորությունների մնացորդները: Յուրաքանչյուր արժութային սյունակում ներկայացվող թվերը դասակարգվում են ըստ ռեզիդենտության: Հետհաշվեկշռային հաշիվները լրացվում են հազար դրամներով: Հաշվետվությունները պետք է պարունակեն հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա (եթե բանկն աշխատել է նաև շաբաթ, կիրակի կամ օրենքով սահմանված ոչ աշխատանքային օրը, ապա՝ այդ օրվա) դրությամբ տվյալները: Բանկի կողմից ինքնուրույն բացված հաշիվները Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվություններում չեն արտացոլվում որպես առանձին հաշիվ:

Որոշ հոդվածներին կից ներկայացված են ,NVե կամ ,NIե հապավումներով տողեր: ,NVե հապավումով տողում ներկայացվում են տվյալ տողի հիմնական հոդվածում ընդգրկված տվյալ ակտիվի կամ պարտավորության մայր գումարը, իսկ ,NIե հապավումով տողում՝ անվանական տոկոսադրույքով հաշվեգրված և դեռ չվճարված տոկոսագումարը, ինչպես նաև տվյալ հոդվածի գծով հաշվարկված տույժերը և տուգանքները: Օրինակ՝ ,10420 NVե տողում ներկայացվում է ,10420ե տողի հանրագումարում ընդգրկված տվյալ ակտիվի մայր գումարը, իսկ ,10421 NIե տողում՝ ,10421ե տողի հանրագումարում ընդգրկվող հաշվեգրված և դեռ չվճարված տոկոսագումարին վերաբերող մասը:

(6-րդ կետը խմբ. 04.11.08թ. թիվ 298Ն, խմբ. 30.11.11թ. թիվ 326Ն, խմբ. 29.05.12թ. թիվ 145Ն)

7. Հավելված 1-ի ձև թիվ 3 հաշվետվությունը բաղկացած է 6 էջից (ֆայլով՝ 6 շիթից):

Հաշվետվությունում հաշվեկշռային ֆինանսական գործիքները ընդգրկվում են համախառն հաշվեկշռային մնացորդներով:

Առաջին էջում ներկայացվում և ամփոփվում են հիմնական տնտեսական նորմատիվների հաշվարկին մասնակցող միջին ամսական ցուցանիշներն ու տնտեսական նորմատիվների փաստացի մեծությունները՝ հաշվարկված կանոնակարգ 14-ի համաձայն: Առաջին (1) և երկրորդ (2) սյուներում լրացվում են համապատասխանաբար ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների նորմատիվային միջին ամսական մեծությունները: Մեկ փոխառուի գծով վարկային կազմակերպության ռիսկի առավելագույն չափը, անկախ այդ նորմատիվի խախտման փաստից, արտացոլվում է երրորդ (3) սյունակի առաջին տողում: Եթե նորմատիվը խախտվել է մի քանի փոխառուների գծով, ապա հաջորդ տողերում ցույց են տրվում խախտում առաջացրած բոլոր գումարները՝ ըստ նվազող հաջորդականության: Վարկային կազմակերպությունը հաշվետվությանը կից պարտադիր ներկայացնում է տեղեկանք՝ խախտում առաջացրած բոլոր գումարների տրամադրման պահի դրությամբ խախտման փաստի առկայության մասին:

Առաջին էջի չորրորդ սյունակը լրացվում է ըստ վարկային կազմակերպության տեսակի: Ընդ որում, խնայողական միությունների համար լրացվում են «50», վարկային միությունների համար՝ «50/3», լիզինգային կազմակերպությունների համար՝ «12.5», ֆակտորինգային կազմակերպությունների համար՝ «10», ունիվերսալ վարկային կազմակերպությունների համար՝ «10» գործակիցները:

Երկրորդ էջում ներկայացվում են ընդհանուր կապիտալի ու դրա տարրերի հաշվեկշռային և նորմատիվային մեծությունները, ինչպես նաև նորմատիվային մեծությունների հաշվարկի համար Կանոնակարգ 14-ով նախատեսված անհրաժեշտ նվազեցումներն՝ ըստ ամսվա բոլոր օրերի: Ընդ որում լրացուցիչ կապիտալի հաշվարկին մասնակցում են ընդգրկվող և չընդգրկվող գումարներ: Ընդգրկվող գումարները, մասնավորապես, հիմնական միջոցների վերագնահատման պահուստներն ու հաշվեկշռի միավորման (կոնսոլիդացիայի) ընթացքում առաջացած արտարժութային տարբերությունների պահուստն են, իսկ չընդգրկվող գումարները՝ երկարաժամկետ ստորադաս փոխառություններն են, ինչպես նաև այն գումարները, որոնք հաշվառվում են որպես կապիտալ, սակայն համաձայն «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» Կանոնակարգ 14-ի, չեն մտնում նորմատիվային կապիտալի հաշվարկի մեջ: Այն օրերին, երբ վարկային կազմակերպության հաշվեկշիռը փոփոխություններ չի կրել (ներառյալ ոչ աշխատանքային օրերը), լրացվում են նախորդ օրվա տվյալները:

Երրորդ էջում ներկայացվում են վարկային կազմակերպության ընդհանուր կապիտալի համարժեքության՝ Ն1 նորմատիվի հաշվարկում ներառվող հաշվեկշռային հոդվածները (ռիսկով կշռված ակտիվների հաշվարկում չեն ներառվում կանոնակարգ 14-ի 16.2-րդ կետով նախատեսված հիմնական կապիտալի հաշվարկից նվազեցվող ակտիվները)՝ ըստ ռիսկի կշիռների և ակտիվների հնարավոր կորուստների մասհանումները:

Չորրորդ էջում ներկայացվում են վարկային կազմակերպության ընդհանուր կապիտալի համարժեքության՝ Ն1 տնտեսական նորմատիվի հաշվարկում ներառվող հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունները և անավարտ ժամկետային գործառնությունները՝ ըստ ռիսկի կշիռների և դրանց համապատասխան պահուստները: Արտարժութային անավարտ ժամկետային գործարքները (հետհաշվեկշռային մասով) հաշվետվության մեջ պետք է գրանցվեն հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա՝ Կենտրոնական բանկի հաշվարկային փոխարժեքով:

Հինգերորդ և վեցերորդ էջերում ներկայացվում են արտարժութային ռիսկի հաշվարկի համար անհրաժեշտ տարրերը՝ համաձայն Կանոնակարգ 14-ի: Ընդ որում, կախված այն

բանից, թե վարկային կազմակերպությունն արտարժութային ռիսկի հաշվարկի որ մեթոդաբանությունից է օգտվում, լրացվում է այս երկու էջերից միայն մեկը:

Հինգերորդ էջը լրացվում է միայն այն դեպքում, երբ վարկային կազմակերպությունն օգտվում է արտարժութային ռիսկի գնահատման Ստանդարտ մեթոդաբանությունից: Հինգերորդ էջի առաջին սյունակում լրացվում է արտարժութային երկար դիրքերի հանրագումարը, երկրորդ սյունակում՝ կարճ դիրքերի հանրագումարը (բացարձակ մեծությամբ), իսկ երրորդ սյունակում՝ թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորների բաց դիրքերի բացարձակ մեծությունների հանրագումարը:

Վեցերորդ էջը լրացվում է միայն այն դեպքում, երբ վարկային կազմակերպությունն օգտվում է արտարժութային ռիսկի գնահատման ՎաՌ մեթոդաբանությունից: Երրորդ սյունակում լրացվում է, թե հաշվետու ամսվա վերջին օրվան նախորդող 250 աշխատանքային օրերի ընթացքում փոխարժեքի փոփոխության պատճառով քանի անգամ է վարկային կազմակերպության օրական կորուստների մեծությունը գերազանցել տվյալ օրվա արտարժութային ՎաՌ-ը:

(7-րդ կետը լրաց., խմբ., փոխ. 04.11.08թ. թիվ 298Ն, լրաց. 29.05.12թ. թիվ 145Ն)

8. Այն վարկային կազմակերպությունները, որոնք իրենց կանոնադրության համաձայն հրապարակային օֆերտայի միջոցով փոխառություններ չեն ներգրավում, ներկայացնում են Հավելված 1-ի ձև թիվ 3.1 հաշվետվությունը, որը լրացվում է Հավելված 1-ի ձև թիվ 3 հաշվետվության 2-րդ էջի մեկնաբանությունների համաձայն:

9. Հավելված 1-ի ձև թիվ 5 հաշվետվությունը լրացվում է աճողական տվյալներով՝ տարեսկզբից ստացված տոկոսային և ոչ տոկոսային եկամուտների, կատարված տոկոսային և ոչ տոկոսային ծախսերի, ակտիվների հնարավոր կորուստների գծով պահուստներին կատարված հատկացումների, դուրս գրված ակտիվների վերադարձից առաջացած գումարների չափով: «Նախորդ ժամանակաշրջան» սյունակում լրացվում են՝ ամսական հաշվետվություններում՝ նախորդ ամսվա, եռամսյակային հաշվետվություններում՝ նախորդ եռամսյակի, իսկ տարեկան տաշվետվություններում՝ նախորդ տարվա վերջին օրվա դրությամբ աճողական տվյալները:

Առանձին տողերի տարանջատումն ըստ ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների՝ կատարվում է եկամուտների ստացման աղբյուրի տեսանկյունից: Օրինակ՝ ոչ ռեզիդենտին ռեզիդենտի կողմից թողարկված արժեթղթի վաճառքից ստացված եկամուտը պետք է արտացոլվի «Արժեթղթերի վաճառքից ստացված զուտ եկամուտներ» տողի «Ոչ ռեզիդենտ» ենթատողում:

Հաշվետվության «3.16. Ներդրումային ծառայությունների մատուցումից ստացված զուտ եկամուտ» տողում լրացվում են Կանոնակարգ 14-ի 6.4-րդ և 6.5-րդ կետերում նշված ծառայությունների դիմաց ստացված զուտ եկամուտները, բացառությամբ 6.4-րդ կետի 4-րդ ենթակետում նշված ծառայության, որի դիմաց եկամուտները լրացվում են «3.6. Արժեթղթերի վաճառքից ստացված զուտ եկամուտներ» տողում:

«Հատկացումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին» և «Ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին կատարված մասհանումների վերադարձ» բաժինների համապատասխան տողերը լրացվում են առանձին գումարներով՝ առանց հաշվանցելու:

(9-րդ կետը լրաց. 04.11.08թ. թիվ 298Ն)

10. Հավելված 1-ի ձև թիվ 6 հաշվետվությունը բաղկացած է 2 էջից (ֆայլով՝ 2 շիթից):

Առաջին էջը (շիթ 1-ը) բաղկացած է «I Վարկային ներդրումները, ավանդները, ֆակտորինգը, լիզինգը, ռեպո համաձայնագրերը ըստ ժամկետների», «II. Վարկերի, դեբիտորական պարտքերի և վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածների դիմաց հաշվարկվող պահուստների չափը» և «III. Ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի չափը» աղյուսակներից:

«I Վարկային ներդրումները, ավանդները, ֆակտորինգը, լիզինգը, ռեպո համաձայնագրերը ըստ ժամկետների» աղյուսակի (այսուհետ I աղյուսակ) «1. Ընդամենը ակտիվներ՝ վարկեր, ավանդներ, ֆակտորինգ, լիզինգ, ռեպո համաձայնագրեր», «2. Ոչ ռեզիդենտներին տրված վարկեր, ավանդներ, ֆակտորինգ, լիզինգ, ռեպո համաձայնագրեր» և «3. Ռեզիդենտներին տրված վարկեր, ավանդներ, ֆակտորինգ, լիզինգ, ռեպո համաձայնագրեր ըստ ճյուղերի» տողերի համապատասխանաբար 2-ից 13-րդ սյուները չեն լրացվում, այլ լրացվում են միայն «Ընդամենը (մայր գումարի մնացորդ) », «Ընդամենը (համախառն հաշվեկշռային մնացրոդ)», «Ընդամենը (քանակ)» սյուները:

I աղյուսակի «1.1 Ժամկետային ակտիվներ» տողում արտացոլվում են վարկային կազմակերպության ընդհանուր ժամկետային վարկերի, բանկային ավանդների, ֆակտորինգի, լիզինգի և ռեպո համաձայնագրերի գումարներն՝ ըստ պայմանագրային ժամկետների: Ընդ որում, եթե պայմանագրով նախատեսված են մասնակի մարումներ, ապա յուրաքանչյուր մասնաբաժնի համար պայմանագրային մարման ժամկետ է հանդիսանում պայմանագրով նախատեսված տվյալ մասնաբաժնի մարման ժամկետը, այլ ոչ թե պայմանագրի վերջնական ժամկետը: I աղյուսակի «1.2 Երկարաձգված ակտիվներ» տողում արտացոլվում են վարկային կազմակերպության ընդհանուր վարկերի, բանկային ավանդների, ֆակտորինգի, լիզինգի և ռեպո համաձայնագրերի գումարները՝ ըստ փաստացի երկարաձգված օրերի: Ընդ որում, եթե ակտիվը երկարաձգվել է մի քանի անգամ, ապա հաշվի է առնվում ընդհանուր երկարաձգումը: Օրինակ, եթե ակտիվը երկարաձգվել է 3 անգամ՝ 40-ական օրով, ապա վարկի գումարը ցույց է տրվում «91-180 օր» սյունակում: Եթե ակտիվի մարման ժամկետը երկարաձգվել է նախքան մարման սկզբնական ժամկետի ավարտը, ապա երկարաձգման օրվանից ակտիվը պետք է համարել երկարաձգված՝ արտացոլելով 1.2 (երկարաձգված ակտիվներ) տողերում:

I աղյուսակի «1.3 Ժամկետանց ակտիվներ» տողում ցույց են տրվում վարկային կազմակերպության ժամկետանց վարկերի, բանկային ավանդների, ֆակտորինգի, լիզինգի և ռեպո համաձայնագրերի գումարներն ըստ ժամկետանց և փաստացի երկարաձգված օրերի հանրագումարի՝ համապատասխան սյունակներում: Օրինակ, եթե ակտիվը երկարաձգված է 80 օր, և հաշվետվության ներկայացման օրը ժամկետանց է արդեն 60 օր, ապա գումարը ցույց է տրվում տողի «91-ից 180 օր» սյունակում:

I աղյուսակի «1.1 Ժամկետային ակտիվներ», «1.2 Երկարաձգված ակտիվներ» և «1.3 Ժամկետանց ակտիվներ» կետերի «վարկեր (լիզինգ, ֆակտորինգ)» ենթակետերում վարկային միությունները, խնայողական միությունները և ունիվերսալ վարկային կազմակերպություններն արտացոլում են տրված վարկերի (բացառությամբ վարկային կազմակերպություններին և բանկերին տրված վարկերի), լիզինգային կազմակերպությունները՝ լիզինգի (բացառությամբ վարկային կազմակերպությունների և բանկերի գծով լիզինգի), ֆակտորինգային կազմակերպությունները՝ ֆակտորինգի (բացառությամբ վարկային կազմակերպությունների և բանկերի գծով ֆակտորինգի) ծավալները: Վարկային կազմակերպություններին և բանկերին տրված վարկերի ավանդների, ֆակտորինգի, լիզինգի և ռեպո համաձայնագրերի հանրագումարներն արտացոլվում են վերը նշված 1.1, 1.2 և 1.3 կետերի «վարկային կազմակերպություններին և բանկերին» ենթակետերում:

Միևնույն գումարը ցույց է տրվում 1.1, 1.2 և 1.3 կետերից մեկում (այսինքն, եթե ակտիվն արդեն երկարաձգվել է, ապա այն ցույց չի տրվում ,1.1 Ժամկետային ակտիվներե տողում, այլ արտացոլվում է ,1.2 Երկարաձգված ակտիվներե տողում, կամ եթե ակտիվը ժամկետանց է, ապա ժամկետանց մասը ցույց է տրվում ,1.3 Ժամկետանց ակտիվներե տողում, իսկ ժամկետում գտնվող մասը՝ ,1.1 Ժամկետային ակտիվներե տողում):

I աղյուսակի «2. Ոչ ռեզիդենտներին տրված վարկեր, ավանդներ, ֆակտորինգ, լիզինգ, ռեպո համաձայնագրեր» կետի 2.1, 2.2 և 2.3 ենթակետերը լրացվում են նույն սկզբունքով, ինչ որ 1.1, 1.2 և 1.3 ենթակետերը:

I աղյուսակի ‚3. Ռեզիդենտներին տրված վարկեր, ավանդներ, ֆակտորինգ, լիզինգ, ռեպո համաձայնագրեր, ըստ ճյուղերիե կետի ենթակետերում օգտագործված ճյուղային դասակարգումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2009 թվականի հունիսի 3-ի թիվ 372-Ն հրամանով հաստատված ‚Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի Հանրապետության դասակարգչիե երկրորդ խմբագրության (NACE rev.2): Հաշվետվության մեջ օգտագործված գործունեության հիմնական խմբերի (A,B…) տառերը և ենթախմբի հերթական համարները համապատասխանում են դասակարգչում օգտագործված տառերին և համարներին:

Հիմնական խմբերի մնացորդները կարող են մեծ կամ հավասար լինել յուրաքանչյուրի ենթախմբերի մնացորդների հանրագումարից, այսինքն՝ տվյալ հիմնական խմբի ենթախմբերում անհրաժեշտ գործունեության տեսակի բացակայության դեպքում այդ ճյուղին տրամադրված գումարների մնացորդն անհրաժեշտ է ներառել հիմնական խմբում:

Հաշվետվության A-R, ինչպես նաև ‚Տնտեսության այլ ճյուղերե բաժիններում անհրաժեշտ է ներկայացնել տնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտներին տրամադրած գումարները, իսկ ‚Հիփոթեքային վարկերե և ‚Սպառողական վարկերե բաժիններում ներկայացվում է ֆիզիկական անձանց վարկավորումը:

A. Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն. Այս խումբն ընդգրկում է բուսական և կենդանական բնական պաշարների շահագործումը: Բաժինը ներառում է մշակաբույսերի աճեցումը, անասնաբուծությունը, անտառային տնտեսությունը, այլ բույսերի և կենդանիների բուծումը գյուղացիական տնտեսություններում կամ բույսերի հավաքումը և կենդանիների որսը բնական միջավայրում:

B. Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում. Այս խումբը ներառում է բնության մեջ հանդիպող պինդ ապարների և հանքանյութերի արդյունահանումը բոլոր եղանակներով: Այս խումբը տարանջատված է երկու ենթախմբերի՝ ‚մետաղական հանքաքարի արդյունահանումե, որը համապատասխանում է ‚Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի Հանրապետության դասակարգչիե երկրորդ խմբագրության 05 խմբում ներառվող գործունեության տեսակներին, և ‚շինանյութերի արդյունահանումե, որում ներառվում են դասակարգչի 08 խմբում նկարագրված գործունեության տեսակները:

C. Մշակող արդյունաբերություն. Մշակող արդյունաբերության խմբում դասվող տնտեսական միավորներին իրականացնում են տնտեսության այլ ճյուղերի (գյուղատնտեսություն, հանքագործական արդյունաբերություն և այլն) կողմից արտադրվող արտադրանքի, նյութերի բաղադրիչների ձևափոխում, նորոգում, վերականգնում:

D. Էլեկտրականություն, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում. Տվյալ խմբում ներառվում է էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարումը արդյունաբերական կազմակերպություններին և բնակելի զանգվածներին:

E. Ջրամատակարարում, կոյուղու, թափոնների կառավարում և վերամշակում. Այս խումբը ներառում է ջրամատակարարումը, կոյուղու, ջրահեռացման և պինդ և ոչ պինդ թափոնների հավաքման և վերամշակման հետ կապված գործունեությունը:

F. Շինարարություն. Այս խմբում ներառվում են նոր շինարարությունը, շինարարական օբյեկտների ընդլայնման կամ վերափոխման, նորոգման հետ կապված աշխատանքները, պատրաստի բլոկավոր կոնստրուկցիաներից շենքերի և ժամանակավոր շինությունների կանգնեցումը շինհրապարակներում:

G. Առևտուր. Այս խմբում ներառվում են ցանկացած ապրանքների մեծածախ և մանրածախ առևտուրը (ապրանքի վաճառք առանց ձևափոխման) և ապրանքների վաճառքին բնորոշ ծառայությունների մատուցումը: Ընդ որում, ‚Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի Հանրապետության դասակարգչիե երկրորդ խմբագրության 45 ենթախմբում ընդգրկված գործունեության գումարներն անհրաժեշտ է բաշխել 46 և 47 ենթախմբերում:

H. Փոխադրումներ և պահեստային տնտեսություն. Այս խումբը ներառում է մարդատար և բեռնատար տրանսպորտային միջոցների գործունեությունը, խողովակաշարերով փոխադրումները, ուղևորների և բեռների տերմինալների շահագործումը, բեռների մշակումը, պահպանումը, ինչպես նաև փոստային ծառայությունները:

I. Կեցության և հանրային սննդի կազմակերպում. Այս խումբը ներառում է կարճաժամկետ բնակության համար հաճախորդներին բնակատեղերի տրամադրման և/կամ տեղում սպառման նպատակով սննդամթերքի և խմիչքների պատրաստումը և վաճառքը (օրինակ՝ ռեստորաններ, սրճարաններ, հյուրանոցներ և այլն): Խմբում չեն ներառվում ամսական կամ տարեկան ժամկետներով բնակարանների վարձակալության տրամադրումը և կերակրատեսակների և խմիչքների պատրաստումը և վաճառքը, որոնք նախատեսված չեն տեղում սպառման համար:

J. Տեղեկատվություն և կապ. Այս խումբը ներառում է տեղեկատվության փոխանցման հաղորդակցման ուղիների, տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառի գործունեությունը, տվյալների կամ այլ տեղեկատվության մշակման ծառայությունները:

K. Ֆինանսական և ապահովագրական գործունեություն. Այս խմբում ներառվում են առևտրային բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ներդրումային ընկերությունների և այլ ֆինանսական կազմակերպությունների գործունեությունը (վճարահաշվարկային կազմակերպություններ, գրավատներ, ապահովագրական միջնորդներ և այլն): Այս բաժնում չեն ներառվում կենտրոնական բանկի հետ իրականացված գործառնությունները:

L. Անշարժ գույքի հետ կապված գործունեություն. Այս խումբը ներառում է անշարժ գույքի առք և վաճառքը, վարձակալության տրամադրումը, գնահատումը:

M. Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն. Այս խումբը ներառում է համապատասխան մասնագիտական որակավորման, գիտելիքների և հմտությունների օգնությամբ սպառողներին ծառայությունների մատուցումը, վերլուծական և հետազոտական աշխատանքների իրականացումը:

P. Կրթություն. Այս խումբը ներառում է տարբեր մակարդակների կրթություն և ցանկացած մասնագիտական ուսուցում:

Q. Առողջապահություն. Այս խումբը ներառում է առողջապահական բնագավառի գործունեությունը և ծառայությունների մատուցումը:

R. Մշակույթ, զվարճություն, հանգիստ. Այս խումբը ներառում է մշակույթի, սպորտի, հանգստի և զվարճության բնագավառում հասարակությանը մատուցվող ծառայությունները:

Տնտեսության այլ ճյուղեր. Այս խմբում արտացոլվում են տնտեսության այն ճյուղերը և գործունեության տեսակները, որոնք ներառված չեն A-R խմբերում, ինչպես նաև ,Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի Հանրապետության դասակարգչի՝ երկրորդ խմբագրության 32.1 և 79 բաժիններում ընդգրկված գործունեության տեսակները:

Հիպոթեքային վարկեր. Այս խմբում ներառվում են ֆիզիկական անձ հաճախորդներին տրամադրվող հիպոթեքային վարկերը՝ անշարժ գույքի ձեռքբերման և վերանորոգման նպատակով, որոնք ապահովված են տվյալ անշարժ գույքով:

Սպառողական և այլ վարկեր. Այս խմբում ներառվում են տնային տնտեսություններին տրամադրվող բոլոր վարկերը, բացառությամբ ,Հիպոթեքային վարկերե խմբում ընդգրկվող վարկերի: Խմբում ընդգրկվում են նաև ֆիզիկական անձ հաճախորդներին՝ անշարժ գույքի ձեռքբերման և/կամ վերանորոգման նպատակով տրամադրված այն վարկերը, որոնք ապահովված չեն տվյալ անշարժ գույքով:

Սույն հաշվետվության իմաստով վարկերի դասակարգումը որևէ ճյուղի մեջ անհրաժեշտ է իրականացնել ելնելով տրամադրվող վարկի օգտագործման նպատակից: Մասնավոր դեպքերում, երբ վարկի օգտագործման նպատակը հնարավոր չէ վերագրել որևէ ճյուղի, անհրաժեշտ է տվյալ վարկը դասակարգել՝ հիմնվելով վարկառու տնտեսվարող սուբյեկտի գործունեության տեսակի վրա: Այն դեպքում, երբ սուբյեկտի գործունեությունը կապված է տնտեսության մի քանի ճյուղերի հետ, անհրաժեշտ է վարկի դասակարգումն իրականացնել հիմնվելով տվյալ սուբյեկտի գործունեության հիմնական տեսակին՝ ըստ շրջանառության ծավալում ունեցած կշիռների:

,3. Ռեզիդենտներին տրված վարկեր, ավանդներ, ֆակտորինգ, լիզինգ, ռեպո համաձայնագրեր ըստ ճյուղերիե տողի ենթակետերը լրացվում են համաձայն պայմանագրերում նշված սկզբնական ժամկետների՝ գումարած երկարաձգված և ժամկետանց օրերը: Օրինակ՝ եթե ակտիվը տրամադրվել է 150 օր սկզբնական ժամկետով, գումարը գրանցվում է ,91-ից 180 օրե սյունակում: Եթե տվյալ ակտիվը երկարաձգվում է 180 օրով, գումարը տեղափոխվում է ,271 օրից 1 տարիե սյունակ, իսկ 40 օր ժամկետանց դառնալու դեպքում՝ ,1-ից 5 տարիե սյունակ: Երկարաձգված օրերի հաշվարկը կատարվում է հաշվետվության ,1. Ընդամենը վարկեր, ավանդներ, ֆակտորինգ, լիզինգ, արժութային սվոփ, ռեպո համաձայնագրերե մասի երկարաձգված տողի լրացման սկզբունքի համաձայն: Ընդ որում, ,3. Ռեզիդենտներին տրված վարկեր, ավանդներ, ֆակտորինգ, լիզինգ, ռեպո համաձայնագրեր ըստ ճյուղերիե տողում լրացվում են միայն վերջին վեց սյունակները (ընդամենը):

,Ընդամենը (մայր գումարի մնացորդ)ե սյունակում լրացվում են վարկային ներդրումների, ավանդների, լիզինգի, ֆակտորինգի և ռեպո համաձայնագրերի մայր գումարների մնացորդները հաշվետու ամսվա վերջի դրությամբ՝ ըստ համապատասխան արժույթների:

,Ընդամենը (համախառն հաշվեկշռային մնացորդ)ե սյունակում լրացվում են վարկային ներդրումների, ավանդների, լիզինգի, ֆակտորինգի և ռեպո համաձայնագրերի համախառն հաշվեկշռային մնացորդները հաշվետու ամսվա վերջի դրությամբ՝ ըստ համապատասխան արժույթների: Հաշվեգրված տույժերը և տուգանքները, որոնք հաշվարկվել են ժամկետանց կամ երկարաձգված ակտիվների նկատմամբ, ցույց են տրվում համապատասխանաբար սյունակի ,Ժամկետանց ակտիվներե կամ ,Երկարաձգված ակտիվներե տողերում:

,Ընդամենը (քանակ)ե սյունակում լրացվում են վարկային ներդրումների, ավանդների, լիզինգի, ֆակտորինգի և ռեպո համաձայնագրերի քանակները՝ ըստ համապատասխան արժույթների: Միևնույն ակտիվի քանակը լրացվում է 1.1, 1.2, 1.3 տողերից միայն մեկում (օրինակ՝ սյունակում չաշխատող (ժամկետանց) ակտիվի քանակը լրացվում է միայն ,Ժամկետանց ակտիվներե տողում):

(պարբերությունը ուժը կորցրել է 21.12.10թ. թիվ 343 Ն որոշմամբ)

«II. Վարկերի, դեբիտորական պարտքերի և վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածների դիմաց հաշվարկվող պահուստների չափը» աղյուսակում (այսուհետ II աղյուսակ) լրացվում են տրված վարկերը, բանկային ավանդները, բանկային հաշիվները, դեբիտորական պարտքերը և վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածները ըստ համապատասխան արժույթների, ընդ որում, հաշվեկշռային հոդվածներն ընդգրկվում են համախառն հաշվեկշռային մնացորդներով: II աղյուսակում վարկերի, բանկային ավանդների, բանկային հաշիվների, դեբիտորական պարտքերի, վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածների խմբավորումը, դասերի հաշվառումն ու դրանց գծով պահուստների ձևավորումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 1999 թվականի ապրիլի 23-ի թիվ 63 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգին» (այսուհետ ակտիվների դասակարգման կարգ) համապատասխան:

«III. Ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների չափը» աղյուսակում (այսուհետ III աղյուսակ) արժեթղթերի դասերի հաշվառումն ու դրանց գծով պահուստների ձևավորումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 1998 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 188 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների ձևավորման և օգտագործման կարգին» (այսուհետ արժեթղթերի դասակարգման կարգ) համապատասխան:

Երկրորդ էջը (շիթ 2-ը) բաղկացած է «IV Չաշխատող և հետհաշվեկշիռ դուրս գրված ակտիվներ» աղյուսակից (այսուհետ IV աղյուսակ):

IV աղյուսակի «1. Ռեզիդենտների չաշխատող և հետհաշվեկշիռ դուրս գրված ակտիվներ/ընդամենը» բաժնի տողերը և տողերի ենթակետերը լրացվում են համաձայն պարտապանի ճյուղային պատկանելության:

«Չաշխատող ակտիվներ /ժամանակաշրջանի սկզբին/» սյունակում արտացոլվում են չաշխատող վարկերի, ավանդների, բանկային հաշիվների, ֆակտորինգի, լիզինգի և այլ դեբիտորական պարտքերի համախառն հաշվեկշռային մնացորդների հանրագումարը հաշվետու ժամանակաշրջանի սկզբին, «Չաշխատող ակտիվներ / ժամանակաշրջանի վերջին/» սյունակում արտացոլվում են չաշխատող վարկերի, ավանդների, բանկային

հաշիվների ֆակտորինգի, լիզինգի, այլ դեբիտորական պարտքերի մնացորդների հանրագումարը հաշվետու ժամանակաշրջանի վերջին: Սույն հաշվետվության իմաստով չաշխատող ակտիվների մեջ են ներառվում հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի դասակարգված վարկերը, ավանդները, թղթակցային հաշիվները, ֆակտորինգը, լիզինգը և այլ դեբիտորական պարտքերը, ընդ որում, ‚Չաշխատող ակտիվներ/ամսվա վերջին/ե սյան ‚ՀՀ դրամե և ‚արտարժույթե սյունակների ‚ընդամենը տողի հանրագումարը պետք է հավասար լինի հաշվետվության առաջին էջի երկրորդ աղյուսակի ‚Վարկերե և ‚Դեբիտորական պարտքերե բաժինների հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի դասակարգված ակտիվների հանրագումարին: «Հետհաշվեկշռային մնացորդը ժամանակաշրջանի սկզբին» սյունակում արտացոլվում են հետհաշվեկշիռ դուրս գրված վարկերի, ավանդների, բանկային հաշիվների, ֆակտորինգի, լիզինգի և այլ դեբիտորական պարտքերի մնացորդների հանրագումարը հաշվետու ժամանակաշրջանի սկզբին, «Ժամանակաշրջանի ընթացքում հետհաշվեկշիռ դուրս գրված ակտիվներ» սյունակում արտացոլվում են հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում հետհաշվեկշիռ դուրս գրված վերը նշված ակտիվների հանրագումարը, «Ժամանակաշրջանի ընթացքում հետհաշվեկշիռ դուրս գրված ակտիվների վերադարձ» սյունակում արտացոլվում են հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում պարտապանների կողմից վերադարձված կամ մարված վարկերի, ավանդների, բանկային հաշիվների, ֆակտորինգի, լիզինգի և այլ դեբիտորական պարտքերի մնացորդների հանրագումարը, որոնք դուրս են գրվել հաշվեկշռից, իսկ «Ժամանակաշրջանի ընթացքում հետհաշվեկշռից դուրսգրումներ» սյունակում արտացոլվում են հետհաշվեկշռից դուրս գրված գումարները, մասնավորապես՝ այն պահանջները, որոնք զիջվել (ներվել) են կամ էլ դադարել է պահանջի իրավունքը:

‚Հետհաշվեկշռային ակտիվների հաշվարկային փոփոխություններե սյունակում արտացոլվում են հետհաշվեկշռում հաշվառվող ակտիվների գծով հաշվարկված տոկոսների, տույժերի և տուգանքների գումարները, եթե այդպիսիք կան, հակառակ դեպքում սյունակը չի լրացվում:

IV աղյուսակի բոլոր արտարժութային հոդվածների մնացորդները ժամանակաշրջանի սկզբի դրությամբ, այդ հոդվածների գծով հոսքերը ժամանակաշրջանի ընթացքում և մնացորդները ժամանակաշրջանի վերջի դրությամբ ներկայացվում են հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա հաշվարկային փոխարժեքներով:

(10-րդ կետը փոխ. 04.11.08թ. թիվ 298Ն, փոխ., խմբ, լրաց. 21.12.10թ. թիվ 343Ն խմբ., փոխ., լրաց. 29.05.12թ. թիվ 145Ն)

10.1. Հավելված1-ի Չև թիվ 7 հաշվետվությունը բաղկացած է 3 էջից:

Հաշվետվությունում հաշվեկշռային արտարժութային հոդվածները և արտարժութային ռիսկ պարունակող դրամային հոդվածները ընդգրկվում են համախառն հաշվեկշռային մնացորդներով:

Արտարժութային առաջին (երկրորդ) խմբերի համար հաշվարկվում է համախառն արտարժութային դիրք, որն իրենից ներկայացնում է առաջին (երկրորդ) խմբի արտարժույթների դիրքերի բացարձակ մեծությունների հանրագումար:

Առաջին էջում լրացվում են «Արտարժութային դիրքի մեծությունն օրվա վերջին» և «Նորմատիվային ընդհանուր կապիտալի 5 տոկոս» սյունակները: Առաջին աղյուսակում արտարժութային դիրքերի հաշվարկը կատարվում է՝ ներառյալ համապատասխան արժույթների գծով ածանցյալ գործիքները, իսկ երկրորդում՝ առանց ածանցյալ գործիքների: Առաջին և երկրորդ աղյուսակների «Արտարժութային դիրքի մեծությունն օրվա

վերջին» սյունակի համապատասխան «I արտարժութային խմբի համախառն դիրք» և «II արտարժութային խմբի համախառն դիրք» ենթասյունակներում լրացվում են արտարժութային համախառն դիրքերն՝ ըստ արտարժութային խմբերի: Առաջին և երկրորդ աղյուսակների «Նորմատիվային ընդհանուր կապիտալի 5 տոկոս» սյունակում լրացվում է տվյալ օրվա նորմատիվային ընդհանուր կապիտալի 5 տոկոսը՝ ըստ օրերի:

Երկրորդ էջում լրացվում են «Արտարժութային դիրքի մեծությունն օրվա վերջին» տողերն՝ ըստ առանձին արտարժույթների (երբ առանձին արտարժույթի գծով վարկային կազմակերպությունն ունի կարճ դիրք, ապա «Արտարժութային դիրքի մեծությունն օրվա վերջին» տողում նշված մեծությունը տրվում է բացասական նշանով:) Երրորդ աղյուսակում արտարժութային դիրքերի հաշվարկը կատարվում է ներառյալ համապատասխան արժույթների գծով ածանցյալ գործիքները, իսկ չորրորդում՝ առանց ածանցյալ գործիքների:

«Արտարժույթի ISO կոդը» տողում լրացվում է տվյալ արտարժութային դիրքի մեծություն ունեցող արտարժույթի ISO կոդը:

Երրորդ էջում ներկայացվում է վարկային կազմակերպության ակտիվների, պարտավորությունների և հետհաշվեկշռային հոդվածների կազմն ըստ արտարժույթների: Երրորդ էջում լրացվում են այն արտարժույթների սյուներն ամբողջությամբ, որոնց գծով համախառն ակտիվները կամ համախառն պարտավորությունները հաշվետվության կազմման պահի դրությամբ գերազանցում են 500.000 Հայաստանի Հանրապետության դրամի համարժեքը: Արտարժութային անավարտ ժամկետային գործարքները աղյուսակ 5-ում պետք է լրացվեն հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա՝ Կենտրոնական բանկի հաշվարկային փոխարժեքով: Ձև թիվ 7 հաշվետվության 5-րդ աղյուսակի 3-րդ տողում պետք է լրացնել հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնությունները: «Արտարժութային հետհաշվեկշռային հոդվածներ» տողը լրացնելիս յուրաքանչյուր արտարժույթի գծով կնքված հետհաշվեկշռային արտարժութային գործարքները պետք է ներկայացվեն զուտ տեսքով: Օրինակ՝ եթե կնքվել է 50 ԱՄՆ դոլարի գնման և 100 ԱՄՆ դոլարի վաճառքի ֆորվարդ, ապա տվյալ տողում պետք է արտացոլել (-50) ԱՄՆ դոլարը:

(10.1 կետը լրաց. 04.11.08թ. թիվ 298Ն, խմբ. 21.12.10թ. թիվ 343Ն, լրաց. 29.05.12թ. թիվ 145Ն)

11. Հավելված 1-ի ձև թիվ 9 հաշվետվությունը լրացվում է ըստ ակտիվների և պարտավորությունների պայմանագրով նախատեսված մարմանը (մասնակի մարումներին) մնացած ժամկետների:

Հաշվետվությունում հոդվածները ընդգրկվում են անվանական գումարների (մայր գումարների) մնացորդներով: Եթե հոդվածը չունի անվանական արժեք (մայր գումար), ապա այն հաշվետվության մեջ ընդգրկվում է համախառն հաշվեկշռային մնացորդով:

Այն ակտիվները, որոնք ցպահանջ չեն և չունեն հստակ սահմանված մարման ժամկետներ, համարվում են անժամկետ և արտացոլվում են «Անժամկետ» սյունակում:

Այն ակտիվները, որոնք, համաձայն ակտիվների դասակարգման կարգի, դասակարգված են չաշխատող, լրացվում են «Չաշխատող» սյունում, ընդ որում, ակտիվի այն մասը, որը դեռ ժամկետի մեջ է, լրացվում է «Ժամկետային» ենթասյունում:

Եթե վարկային կազմակերպության բանկային հաշիվների միջոցներն ամբողջությամբ (կամ մասամբ) սառեցվել (դեպոնացվել) են որոշակի ժամանակով, ապա սառեցված (դեպոնացված) մասը համարվում է ժամկետային միջոց և արտացոլվում է համապատասխան (պայմանագրով նախատեսված սառեցման ժամկետով) ժամկետային

սյունակներում: Եթե այդ միջոցները սառեցվել (դեպոնացվել) են անժամկետ, ապա դրանք արտացոլվում են «Անժամկետ» սյունակում:

Հաշվետվության մեջ ակտիվների կազմում չեն ընդգրկվում հիմնական միջոցները, ոչ նյութական ակտիվները, վերջիններիս գծով կատարված կապիտալ ներդրումները, արագամաշ առարկաները, դրանց ձեռքբերման նպատակով կատարված կանխավճարները, ինչպես նաև հետագայում ծախսերով ձևակերպման ենթակա կանխավճարները:

«Կանխիկ և կանխիկին հավասարեցված դրամական միջոցներ» տողում արտացոլվում են կանխիկ դրամական միջոցները և վճարային փաստաթղթերը (կանխիկ դրամը դրամարկղում, կանխիկ դրամը ճանապարհին, կանխիկ դրամը բանկոմատներում, կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթերը), թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորները և թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորները ճանապարհին: Ոսկու ոչ ստանդարտացված ձուլակտորները Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ չհաստատված վճարային քարտերը հաշվետվության մեջ չեն ընդգրկվում:

«Պահանջներ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նկատմամբ» տողում լրացվում են վարկային կազմակերպությունների կողմից Կենտրոնական բանկում բացված հաշիվների միջոցները, տեղաբաշխված ցպահանջ և ժամկետային ավանդները, կանոնադրական կապիտալի համալրման նպատակով Կենտրոնական բանկում միջոցները, դեպոնացված միջոցները Կենտրոնական բանկում, սառեցված միջոցները Կենտրոնական բանկում, ինչպես նաև այլ պահանջները Կենտրոնական բանկի նկատմամբ (առկայության դեպքում):

«Պահանջներ ռեզիդենտ բանկերի նկատմամբ» տողում լրացվում են Հայաստանի Հանրապետության բանկերում բացված բանկային հաշիվները, ավանդները, վարկերը, բանկերում սառեցված (դեպոնացված) միջոցները, բանկերի նկատմամբ պահանջները ֆակտորինգի, լիզինգի, երաշխավորությունների գծով, դեբիտորական պարտքերը, արժեթղթերով գործարքների գծով ստացվելիք գումարները, բանկերի կողմից թողարկված արժեթղթերը (բացառությամբ բաժնետոմսերի): Այս տողում չեն ընդգրկվում ռեզիդենտ բանկերի հետ կնքված ռեպո համաձայնագրերը:

«Պահանջներ ԲԲԲ - (Բաա3) և բարձր վարկանիշ ունեցող բանկերի, նրանց դուստր բանկերի, մասնաճյուղերի նկատմամբ» տողում լրացվում են ԲԲԲ - (Բաա3) և բարձր ռեյտինգ ունեցող բանկերում, նրանց մասնաճյուղերում և Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող դուստր բանկերում բացված բանկային հաշիվները, ավանդները, այդ թվում՝ թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներով ավանդները, վարկերը, բանկերում դեպոնացված միջոցները, բանկերի նկատմամբ պահանջները ֆակտորինգի, լիզինգի և երաշխավորությունների գծով, դեբիտորական պարտքերը, արժեթղթերով գործարքների գծով ստացվելիք գումարները, բանկերի կողմից թողարկված արժեթղթերը, բացառությամբ բաժնետոմսերի, բանկերում սառեցված հաշիվները: Այս տողում չեն ընդգրկվում ԲԲԲ - (Բաա3) և բարձր ռեյտինգ ունեցող բանկերի հետ կնքված ռեպո համաձայնագրերը:

«Պահանջներ այլ բանկերի նկատմամբ» տողում լրացվում են ԲԲԲ - (Բաա3) - ից ցածր ռեյտինգ ունեցող և ռեյտինգ չունեցող բանկերում, նրանց մասնաճյուղերում և Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող դուստր բանկերում բացված բանկային հաշիվները, ավանդները՝ այդ թվում թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներով ավանդները, վարկերը, բանկերում դեպոնացված միջոցները, բանկերի նկատմամբ պահանջները ֆակտորինգի, լիզինգի և երաշխավորությունների գծով, դեբիտորական պարտքերը, արժեթղթերով գործարքների գծով ստացվելիք գումարները, բանկերի կողմից թողարկված արժեթղթերը, բացառությամբ բաժնետոմսերի, բանկերում

սառեցված հաշիվները: Այս տողում չեն ընդգրկվում ԲԲԲ - (Բաա3) -ից ցածր ռեյտինգ ունեցող բանկերի հետ կնքված ռեպո համաձայնագրերը և արժութային սվոպը:

«Պահանջներ Հայաստանի Հանրապետության կառավարության նկատմամբ» տողում արտացոլվում են բյուջեի նկատմամբ դեբիտորական պարտքերը, վճարված կանխավճարները: Ընդ որում, կանխավճարներն արտացոլվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ հարկերի վճարման վերջին ժամկետի լրանալուն մնացած օրերի քանակին համապատասխանող սյունակում:

«Պահանջներ ԲԲԲ - (Բաա3) և բարձր ռեյտինգ ունեցող կենտրոնական բանկերի և կառավարությունների նկատմամբ» տողում լրացվում են ԲԲԲ - (Բաա3) և բարձր ռեյտինգ ունեցող կենտրոնական բանկերի և կառավարությունների կողմից թողարկված արժեթղթերում կատարված ներդրումները:

«Պահանջներ այլ կենտրոնական բանկերի և կառավարությունների նկատմամբ» տողում լրացվում են ԲԲԲ - (Բաա3) - ից ցածր ռեյտինգ ունեցող և ռեյտինգ չունեցող կենտրոնական բանկերի և կառավարությունների կողմից թողարկված արժեթղթերում կատարված ներդրումները:

Հաշվետվության «1.4» և «1.5» տողերում արտացոլվում են բանկերի նկատմամբ ինչպես երկարաժամկետ, այնպես էլ կարճաժամկետ պահանջները, սակայն հաշվետվությունը լրացվում է հաշվի առնելով բանկի երկարաժամկետ (երկարաժամկետ պահանջներին տրվող) ռեյտինգը:

Հաշվետվության «1.8» և «1.9» տողերում արտացոլվում են օտարերկրյա կենտրոնական բանկերի և կառավարությունների նկատմամբ ինչպես երկարաժամկետ, այնպես էլ կարճաժամկետ պահանջները, սակայն հաշվետվությունը լրացվում է հաշվի առնելով օտարերկրյա կենտրոնական բանկի կամ կառավարության երկարաժամկետ (երկարաժամկետ պահանջներին տրվող) ռեյտինգը:

«Ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթեր» տողում լրացվում են ռեզիդենտներից և ոչ ռեզիդենտներից ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերը, որոնք հաշվառվում են հետհաշվեկշռում: Ընդ որում, արժեթղթերը տարանջատվում են ոչ թե ըստ մարմանը մնացած օրերի, այլ ըստ արժեթղթերի հետ վերադարձմանը (վաճառքին) մնացած օրերի:

«Ռեպո համաձայնագրերով ձեռք բերված Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսեր» տողում լրացվում են ռեզիդենտներից և ոչ ռեզիդենտներից ռեպո համաձայնագրերով ձեռք բերված Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերը, որոնք հաշվառվում են հետհաշվեկշռում: Ընդ որում, պարտատոմսերը տարանջատվում են ոչ թե ըստ մարմանը մնացած օրերի, այլ ըստ պարտատոմսերի հետ վերադարձմանը (վաճառքին) մնացած օրերի:

«Ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթեր» տողում լրացվում են ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթերը և արժութային սվոպով վաճառված արտարժույթը: Ընդ որում, վաճառված արժեթղթերը և արտարժույթը հաշվետվության մեջ արտացոլվում են ըստ արժեթղթերի և արտարժույթի հետ ստացմանը (գնմանը) մնացած օրերի:

,Հաշվարկված ստացվելիք տոկոսներե տողում լրացվում են ռեզիդենտներից և ոչ ռեզիդենտներից ստացվելիք հաշվեգրված անվանական տոկոսները: Չաշխատող ակտիվների դիմաց հաշվեգրված ստացվելիք անվանական տոկոսների մեծությունը լրացվում է ,Չաշխատողե սյան համապատասխան ենթասյուներում և ընդգրկվում է ,1. Ակտիվների մարման ժամկետայնության վերաբերյալե բաժնի ,Ընդամենը սյան հաշվարկի մեջ:

«Այլ պահանջներ» տողում լրացվում են ածանցյալ գործիքները (հաշվեկշռում ճանաչված ակտիվային մասով), ստացվելիք շահաբաժինները,

տույժերը, տուգանքները, առևտրական նպատակով պահվող, վաճառքի համար մատչելի, ինքնարժեքի մեթոդով հաշվառվող ներդրումները ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների կանոնադրական կապիտալներում և այլ պահանջները, որոնք արտացոլված չեն նախորդ տողերից ոչ մեկում:

(Պարբերությունը ուժը կորցրել է 29.05.12թ. թիվ թիվ 145 Ն):

Եթե հստակ մարման ժամկետ ունեցող ակտիվի պայմանագրային ժամկետը գերազանցում է ակտիվի սառեցման կամ դեպոնացման ժամկետը, ապա ակտիվն արտացոլվում է ըստ մարմանը մնացած ժամկետների, հակառակ դեպքում՝ ըստ սառեցման ժամկետների:

Պարտավորությունների «ժամկետանց» սյունակը լրացվում է միայն այն պարտավորությունների մասով, որոնք, բացառությամբ դատարանի, կամ միջնորդ դատարանի վարույթում գտնվողների, չեն կատարվել պարտավորությամբ սահմանված ժամկետում:

Պարտավորությունների ցպահանջ սյունակում լրացվում են հաշվեկշռի «Պարտավորություններ» կարգում հաշվառվող ցպահանջ, իսկ «Անժամկետ» սյունակում՝ մարման սահմանված ժամկետ չունեցող միջոցները, ընդ որում

դատարանի կամ միջնորդ դատարանի վարույթում գտնվող գործերով պարտավորությունները համարվում են ցպահանջ և լրացվում են «ցպահանջ» սյունակում:

«Պարտավորություններ Հայաստանի Հանրապետության կառավարության նկատմամբ» տողում լրացվում են գանձապետարանից ստացված վարկերը, կրեդիտորական պարտքերը բյուջեի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով և կառավարության նկատմամբ այլ պարտավորությունները:

«Պարտավորությունների ժամկետայնության վերաբերյալ» բաժնում արժեթղթերով գործարքների և ֆինանսական լիզինգի գծով վճարվելիք գումարներն ընդգրկվում են պայմանագրի կողմ հանդիսացող հաճախորդի պատկանելիության համապատասխան տողերում:

«Պարտավորություններ միջազգային ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ» տողում արտացոլվում են միջազգային կազմակերպություններից ներգրավված բոլոր միջոցները՝ անկախ երաշխավորից:

«Պարտավորություններ վարկային կազմակերպության կողմից թողարկված արժեթղթերի գծով» տողում լրացվում են վարկային կազմակերպության կողմից թողարկված բոլոր տեսակի արժեթղթերի գումարները, բացառությամբ բաժնետոմսերի:

«Ռեպո համաձայնագրերով և արժութային սվոպով ներգրավված միջոցներ» տողում լրացվում են ռեզիդենտներից և ոչ ռեզիդենտներից ռեպո համաձայնագրերով ներգրավված միջոցները:

,Պարտավորություններ ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի գծովե տողում արտացոլվում են ռեզիդենտներից և ոչ ռեզիդենտներից ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի վաճառքի արդյունքում առաջացած պարտավորությունների գումարները:

«Այլ պարտավորություններ» տողում արտացոլվում են ածանցյալ գործիքները (հաշվեկշռում ճանաչված պարտավորությունների մասով), վճարման ենթակա շահաբաժինները, տույժերը, տուգանքները, հաշվարկային պարտավորությունները չեկերի, այլ վճարային փաստաթղթերի և ակրեդիտիվների գծով, ներքին և արտաքին կրեդիտորական պարտքերը, տարանցիկ հաշիվները և այլ ֆինանսական պարտավորությունները, որոնք չեն ընդգրկվել վերը նշված տողերում:

«Հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններ» տողում լրացվում են պայմանական պարտավորությունները տրամադրված

երաշխավորությունների, վարկային գծերի և օվերդրաֆտների չօգտագործված մասերը:

,Խոշորե պարտավորություններե տողում լրացվում են այն բոլոր պարտավորությունների անվանական արժեքների և անվանական տոկոսների հանրագումարները, որոնց հաշվեկշռային արժեքները, առանձին վերցված, կազմում են վարկային կազմակերպության ընդհանուր պարտավորությունների 5 և ավելի տոկոսը՝ առանց հաշվի առնելու փոխկապակցվածությունը:

«Փոփոխվող տոկոսադրույքներով» տողերում լրացվում են այն միջոցները, որոնք ներգրավվել կամ տեղաբաշխվել են ոչ ֆիքսված տոկոսադրույքներով (այսինքն՝ այդ միջոցների տոկոսադրույքները վերանայվում են շուկայական տոկոսադրույքների ցանկացած փոփոխության դեպքում):

«Փոփոխվող տոկոսադրույքներով» տողերում միջոցները լրացվում են ըստ տոկոսադրույքների վերանայմանը մնացած ժամկետների, այլ ոչ թե ակտիվի կամ պարտավորության մարմանը մնացած ժամկետների:

Օրինակ 1. եթե վարկային կազմակերպությունը ներգրավել է մինչև 5 տարի մարման ժամկետով փոխառություն, որի տոկոսադրույքները վերանայվելու են յուրաքանչյուր 3 ամիսը մեկ, ապա հաշվետվության «Փոփոխվող տոկոսադրույքներով» տողում այդ փախառության գումարը պետք է լրացվի «91-120 օր» սյունակում, իսկ հաջորդ հաշվետու ժամանակաշրջանում նույն փոխառության գումարը կարտացոլվի «61-90 օր» սյունակում:

Օրինակ 2. եթե վարկային կազմակերպությունը ներգրավել է մինչև 3 տարի մարման ժամկետով փոխառություն, որի տոկոսադրույքները վերանայվելու են շուկայի ցանկացած փոփոխության դեպքում, ապա հաշվետվության «Փոփոխվող տոկոսադրույքներով» տողում այդ փոխառության գումարը պետք է լրացվի «Ցպահանջ» սյունակում:

«Ֆիքսված տոկոսադրույքներով» տողերում լրացվում են այն միջոցները, որոնք ներգրավվել և տեղաբաշխվել են ֆիքսված տոկոսադրույքներով: Ակտիվները և պարտավորությունները արտացոլվում են ըստ մարմանը մնացած ժամկետների:

«Անտոկոս» տողերում լրացվում են այն միջոցները, որոնք ներգրավվել կամ տեղաբաշխվել են առանց տոկոսների վճարման (ստացման) պայմանի:

Արտարժույթի խմբավորումը կատարվում է համաձայն սույն կանոնակարգի 6-րդ կետի: Հաշվետվության մեջ «I խմբի արտարժույթով» և «II խմբի արտարժույթով» տողերում արտացոլվում են վերը նշված բոլոր տողերում ընդգրկվող արտարժույթով (այդ թվում նաև թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներով արտահայտված պահանջներն ու պարտավորությունները), ինչպես նաև արտարժութային ռիսկ պարունակող դրամային ակտիվների և պարտավորությունների գումարները և անավարտ ժամկետային գործարքների պայմանագրային արժեքը, բացառությամբ «Հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններ» տողի գումարի և անավարտ ժամկետային գործարքների իրական արժեքի: «Փոփոխվող», «Ֆիքսված» և «Անտոկոս» տողերի գումարները պետք է հավասար լինեն բոլոր տողերի հանրագումարին, բացառությամբ «Հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններ» (Պարտավորությունների ժամկետայնության վերաբերյալ բաժնում), «Հաշվարկված վճարվելիք տոկոսներ» և «Հաշվարկված ստացվելիք տոկոսներ» տողերի գումարի:

(11-րդ կետը լրաց., փոխ. 04.11.08թ. թիվ 298Ն, փոխ. 21.12.10թ. թիվ 343Ն), փոխ., խմբ., լրաց. 29.05.12թ. թիվ 145Ն)

12. Հավելված 1-ի ձև թիվ 10 հաշվետվությունը ներկայացվում է կանոնադրական կապիտալի յուրաքանչյուր փոփոխության դեպքում: «Ամսաթիվը» մասում լրցվում է.

ա) կանոնադրական կապիտալի փոփոխության օրը, այն է՝ Կենտրոնական բանկի կողմից կանոնադրության կամ կանոնադրությունում կատարված փոփոխության գրանցման օրը,

բ) վարկային կազմակերպության 1% և ավելի բաժնեմաս ունեցող բաժնետերերի տվյալներում յուրաքանչյուր փոփոխության օրը, այն է՝ դեպոզիտարիայում կամ վարկային կազմակերպության բաժնետերերի ռեեստրում գրանցման օրը (բաց բաժնետիրական ընկերություն հանդիսացող վարկային կազմակերպությունների համար),

գ) բոլոր փայատերերի (բաժնետերերի, անդամների) տվյալներում յուրաքանչյուր փոփոխության օրը, այն է՝ դեպոզիտարիայում, վարկային կազմակերպության ռեեստրում կամ Կենտրոնական բանկի գրանցամատյանում գրառում կատարելու օրը (փակ բաժնետիրական, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն և կոոպերատիվ հանդիսացող վարկային կազմակերպությունների համար): «Վարկային կազմակերպության կազմակերպական-իրավական կարգավիճակը» մասում լրացվում է, բաժնետիրական ընկերություն, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն կամ կոոպերատիվ՝ կախված կազմակերպության կարգավիճակից:

«Կանոնադրական կապիտալի հայտարարման ամսաթիվը» մասում լրացվում է վարկային կազմակերպության իրավասու մարմնի կողմից կանոնադրական կապիտալի հայտարարման ամսաթիվը՝ նման փաստի առկայության դեպքում: Սույն հաշվետվության իմաստով, հայտարարման ամսաթիվ է համարվում վարկային կազմակերպության իրավասու մարմնի կողմից վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի համալրման մասին որոշման կայացման օրը: «Կանոնադրական կապիտալի համալրման ամսաթիվը» մասում լրացվում է վարկային կազմակերպության կողմից իր հաշվին կապիտալի համալրման նպատակով գումարը փոխանցելու ամսաթիվը:

Հաշվետվությունը լրացվում է.

- Բաց բաժնետիրական ընկերություն հանդիսացող վարկային կազմակերպությունների կողմից՝ 1% և ավելի բաժնեմաս ունեցող բաժնետերերի տվյալներն առանձին տողերով, իսկ մինչև 1% բաժնեմաս ունեցող բոլոր բաժնետերերի տվյալները երկու տողով՝ ընդ որում, առաջին տողով լրացվում են ռեզիդենտ, իսկ երկրորդ տողով՝ ոչ ռեզիդենտ բաժնետերերը:
- Փակ բաժնետիրական, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն հանդիսացող և կոոպերատիվ վարկային կազմակերպությունների բոլոր փայատերերի (բաժնետերերի, անդամների) տվյալները առանձին տողերով:

Եթե մասնակիցը ֆիզիկական անձ է, ապա «Սեփականության ձևը» սյունակում անհրաժեշտ է նշել «ֆիզիկական անձ», եթե մասնակիցը իրավաբանական անձ է և իր բաժնեմասերի 50%-ից ավելին պատկանում է պետությանը՝ «պետական մասնակցությամբ», մնացած դեպքերում՝ «ոչ պետական»:

,Երկրի կոդե սյունակում լրացվում է մասնակցի ռեզիդենտության երկրի եռանիշ կոդը՝ համաձայն ISO 3166-1 alpha-3 միջազգային ստանդարտի:

«Բաժնետոմսի տեսակը (սովորական, արտոնյալ)» սյունակը լրացվում է միայն բաժնետիրական ընկերությունների համար՝ «Սովորական» կամ «Արտոնյալ» բառերով՝ կախված բաժնետոմսի տեսակից (սահմանափակ պատասխանատվությամբ և կոոպերատիվ վարկային կազմակերպությունների համար վերը նշված սյունակը չի լրացվում):

Բաժնետիրական ընկերությունների համար «Բաժնետոմսերի դեպոզիտարիայում գրանցման օրը/Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի գրանցամատյանում գրառում կատարելու օրը» սյունակում լրացվում է բաժնետոմսերի դեպոզիտարիայում, իսկ սահմանափակ պատասխանատվությամբ (այդ թվում՝

կոոպերատիվ) վարկային կազմակերպությունների համար՝ Կենտրոնական բանկի գրանցամատյանում գրառում կատարելու օրը:

«Ռեզիդենտ (ոչ ռեզիդենտ)» սյունակը լրացվում է «ռեզիդենտ» կամ «ոչ ռեզիդենտ» բառերով՝ կախված մասնակցի ռեզիդենտությունից: Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ տերմինների սահմանումները տրված են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի մայիսի 14-ի թիվ 173 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության դրամավարկային և բանկային վիճակագրության ձեռնարկում»:

Բաժնետիրոջ կամ բաժնեմասի յուրաքանչյուր փոփոխության դեպքում վարկային կազմակերպությունը ձև թիվ 10 հաշվետվության հետ մեկտեղ Կենտրոնական բանկ է ներկայացնում նաև այդ փոփոխության օրինականությունը հաստատող փաստաթղթերը՝ առուվաճառքի պայմանագիր, քաղվածք ռեեստրից, քաղվածք հաշվից: Նշված փաստաթղթերը բաց բաժնետիրական ընկերությունները ներկայացնում են 5%-ից ավելի մասնակցություն ունեցող բաժնետերերի կազմում փոփոխությունների դեպքում:

(12-րդ կետը խմբ., լրաց. 04.11.08թ. թիվ 298Ն, լրաց. 21.12.10թ. թիվ 343Ն, լրաց. 29.05.12թ. թիվ 145Ն)

13. (13-րդ կետը ուժը կորցրել է 04.11.08թ. թիվ 298 Ն որոշմամբ):

14. Հավելված 1-ի Չև թիվ 13 հաշվետվությունը բաղկացած է 2 էջից: 1-ին էջում ներկայացվում է ամփոփ հաշվետվություն վարկային կազմակերպության Հայաստանի Հանրապետության դրամով, ԱՄՆ դոլարով, եվրոյով և այլ արժույթներով դրամարկղային շրջանառության մասին, իսկ 2-րդ էջում՝ ըստ մասնաճյուղերի: Հաշվետվության 1-ին էջի 3-րդ և 5-րդ տողերում պետք է ընդգրկվեն այլ բանկերից ստացված և բանկերին հանձնված գումարները:

«Այլ արտարժույթներ» սյունակի սկզբնական մնացորդը ԱՄՆ դոլարի է վերածվում նախորդ ժամանակաշրջանի վերջին օրվա՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի փոխարժեքով, իսկ վերջնական մնացորդը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տեղեկացված՝ արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքով:

2-րդ էջի 2.2, 2.3 և 2.4 տողերում ընդգրկվում են տվյալ մասնաճյուղի կողմից ստացված դրամական մուտքերը, համապատասխանաբար, ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ բանկերից, հաճախորդներից, ինչպես նաև 2.5 տողում՝ տվյալ վարկային կազմակերպության գլխամասից և այլ մասնաճյուղերից ստացված մուտքերը: Աղյուսակի 2.6 տողում արտացոլվում են բոլոր այն մուտքերը, որոնք չեն ներառվել 2-րդ էջի վերը նշված տողերում: Նույն էջի 3.2, 3.3 և 3.4 տողերում ընդգրկվում են, համապատասխանաբար, ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ բանկերին, հաճախորդներին, ինչպես նաև 3.5 տողում՝ տվյալ վարկային կազմակերպության գլխամասին և այլ մասնաճյուղերին վճարած գումարները: Աղյուսակի 3.6 տողում արտացոլվում են բոլոր այն դրամական ծախսերը, որոնք չեն ներառվել ծախսային այլ տողերում:

2-րդ էջում մասնաճյուղերի վերաբերյալ տեղեկատվության մեջ արտացոլվում են միայն դրամով գործառնությունները:

(14-րդ կետը խմբ. 04.11.08թ. թիվ 298Ն)

15. Թիվ 17 հաշվետվությունը բաղկացած է 5 էջից: Թիվ 17 հաշվետվությունը լրացվում է միայն հաշվետու շաբաթվա ընթացքում կնքված նոր վարկային, օվերնայթային, ռեպո համաձայնագրերի, ֆակտորինգի, լիզինգի, ինչպես նաև նախկինում կնքված պայմանագրերի համաձայն հաշվետու ժամանակաշրջանում ներգրավված և տեղաբաշխված միջոցների հիման վրա՝ հազար միավորներով: Հաշվետվության մեջ ընդգրկվում են միայն այն երկարաձգված ներգրավված և տեղաբաշխված միջոցները, որոնք տոկոսադրույքները և/կամ արժույթները, համաձայն կնքված պայմանագրերի, փոփոխվել են: Կենտրոնական բանկի հետ կատարված գործարքները հաշվետվության մեջ չեն ընդգրկվում: Հաշվետվության բոլոր էջերում տոկոսադրույքի հաշվարկն իրականացվում է միջին կշռված եղանակով: Հաշվետվության 3-րդ, 4-րդ և 5-րդ էջերում չեն ընդգրկվում նաև բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների հետ կատարված գործարքները: Տոկոսադրույքների հաշվարկման ժամանակ տարվա օրերի քանակը ընդունել 365 օր: Եթե պայմանագրում առկա են դրույթներ, որոնք թույլ են տալիս տոկոսների փոփոխություններ և/կամ հաճախորդի կողմից կատարվող կամ կատարվելիք ծախսերում ներառվող վճարների քանակական կամ գումարային փոփոխություններ և որոնց վերաբերյալ հնարավոր չէ ունենալ հստակ կանխատեսումներ, ապա տարեկան արդյունավետ տոկոսադրույքը պետք է հաշվարկվի պայմանագրի կնքման պահին գործող չափանիշների հիման վրա՝ ենթադրելով, որ տոկսները և/կամ հաճախորդի կողմից կատարվող կամ կատարվելիք ծախսերը մնալու են կայուն և կիրառվելու են մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը:

«Ֆիզիկական անձանց տրված հիփոթեքային վարկեր» տողում պետք է արտացոլվեն ֆիզիկական անձանց բնակարան ձեռք բերելու կամ բնակարանը վերանորոգելու նպատակողվ տրամադրված վարկերը կամ փոխառությունները, որոնք ապահովված են տվյալ բնակարաններով: Հիփոթեքային վարկի դեպքում վարկառուին (գրավատուին) է մնում գրավադրված գույքի օգտագործման իրավունքը:

«Ֆիզիկական անձանց տրված սպառողական և այլ վարկեր» տողում արտացոլվում են ֆիզիկական անձանց տրված այն վարկերը, որոնք օգտագործվում են սպառողական ծախսերի ֆինանսավորման համար, այդ թվում՝ ապրանքների ապառիկ վաճառքի վարկավորումը:

Միջազգային վարկային ծրագրերով ներգրավված/տեղաբաշխված գումարները պետք է արտացոլվեն միայն սույն հաշվետվության 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ էջերի «Միջազգային վարկային ծրագրերով» տողերում՝ 1-ին էջում՝ ներգրավված, իսկ 2-րդ, 4-րդ և 5-րդ էջերում՝ տեղաբաշխված գումարները: Ընդ որում, «Միջազգային վարկային ծրագրերով» տողերում արտացոլվում են միջազգային բոլոր վարկային ծրագրերով ներգրավված և տեղաբաշխված միջոցները (Գերմանահայկական հիմնադրամից և այլն): «Միջազգային վարկային ծրագրերով» և «Կառավարության երաշխիքով» տողերում արտացոլվող միջոցները չպետք է արտացոլել այլ տողերում:

«Այլ արժույթներ» տողերը, ինչպես նաև հաշվետվության այն տողերը, որոնք ներկայացված չեն ըստ արժույթների, լրացվում են դրամական արտահայտությամբ հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ՝ Կենտրոնական բանկի կողմից տեղեկացված՝ արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքով:

Շաբաթվա ընթացքում տրված վարկերի միջին տարեկան տոկոսադրույքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

Մտ=(Վ1*Տ1+Վ2*Տ2+…+Վm*Տm)/(Վ1+Վ2+...+Վm), որտեղ Վ-ն տրված վարկերի ծավալն է, Տ-ն՝ տրված վարկերի տարեկան տոկոսները, 1-m-ը՝ տրված վարկերի քանակը:

Շաբաթվա ընթացքում ներգրավված փոխառությունների դիմաց վճարվող միջին տարեկան տոկոսադրույքը հաշվարկվում է հետևյալ կերպ.

Մտ=(Φ1*Տ1+Φ2*Տ2+…+Φn*Տn)/(Φ1+Φ2+...+Φn), որտեղ Φ-ն՝ փոխառությունների ծավալներն են, Տ-ն՝ փոխառությունների դիմաց վճարվող տարեկան տոկոսները, 1-n-ը՝ փոխառությունների քանակը: Ձևերը լրացվում են տարեկան տոկոսադրույքներով:

Շաբաթվա ընթացքում կայացած ռեպո գործարքների միջին ռեպո տոկոսադրույքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

Մտ=(Ռ1*Տ1+Ռ2*Տ2+…+Ռn*Տn)/(Ռ1+Ռ2+…+Ռn), որտեղ Ռ-ն կնքված ռեպո գործարքների ծավալն է, Տ-ն՝ կնքված ռեպո գործարքների տոկոսադրույքները, 1-n-ը՝ կայացած գործարքների քանակը:

1-ին և 2-րդ էջերում արտացոլվում են ներգրավված/տեղաբաշխված գումարների անվանական տոկոսադրույքները: Մասնակի մարումների սահմանված գրաֆիկով ներգրավված/տեղաբաշխված միջոցները հաշվետվության մեջ արտացոլվում են ըստ կնքված պայմանագրերի վերջնական ժամկետի:

Առանձին աղյուսակում լրացվում են այն բանկերի, վարկային կազմակերպությունների անվանումները, որոնց հետ իրականացվել են գործարքները՝ նշելով ներգրաված կամ տեղաբաշխված միջոցի ծավալը, ժամկետը և միջին տարեկան տոկոսադրույքը՝ ըստ արժույթի տեսակի, և գործարքի տեսակը (օրինակ՝ օվերնայթ, վարկ, փոխառություն, ռեպո և այլն): Բանկերի և վարկային կազմակերպությունների հետ իրականացված գործարքների արտացոլման համար նախատեսված աղյուսակում տրամադրված օվերնայթները պետք է արտացոլել առանձին տողերով՝ շաբաթվա յուրաքանչյուր օրվա համար:

3-րդ և 4-րդ էջերում արտացոլվում են ներգրավված/տեղաբաշխված գումարների արդյունավետ տոկոսադրույքները:

3-րդ և 4-րդ էջերում ցպահանջ միջոցների բաժնի ,գումարե մասում ներառվում են միայն օվերդրաֆտները և վարկային գծերը, ընդ որում, վերջիններիս գումարների գրանցումն իրականացվում է փաստացի ստացված/տրամադրված գումարների (հաշվետվության օրվա դրությամբ մնացորդային գումարների/առկա պաշարների) չափով, իսկ ,%ե սյունակում լրացվող տոկոսադրույքի հաշվարկման համար կիրառվում է համաձայնեցված տարեկան տոկոսադրույքի հաշվարկման (annualized agreed rate, AAR) բանաձևը՝

$$X = \left(1 + \frac{r_{ag}}{n}\right)^n - 1 \qquad (1)$$

որտեղ՝

X – համաձայնեցված տարեկան տոկոսադրույքն է (ՀՏՏ),

r_{ag} – վարկային կազմակերպության և հաճախորդ ի միջև համաձայնեցված պարզ տոկոսադրույքն է,

n – հաշվեգրված տոկոսների վճարումների (կապիտալիզացիաների) քանակն է մեկ տարվա ընթացքում:

3-րդ և 4-րդ էջերում ժամկետային միջոցների բաժնի ,գումարե սյունակներում ընդգրկվում են հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում, ինչպես նաև նախկինում կնքված պայմանագրերի համաձայն հաշվետու ժամանակաշրջանում փաստացի ներգրավված կամ տեղաբաշխված գումարները ամբողջությամբ, իսկ տոկոսադրույքի հաշվարկման համար կիրառվում է մանրամասն սահմանված էֆեկտիվ տոկոսադրույքի հաշվարկման (narrowly defined effective rate, NDER) բանաձևը՝

$$A = \sum_{n=1}^{N} \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}} \qquad (2)$$

որտեղ՝

i – մանրամասն սահմանված էֆեկտիվ տոկոսադրույքն է (ՄՍԷՏ),

K_n - դրամական միջոցների n հոսքեր՝ վարկային կազմակերպության տեսանկյունից,

N - դրամական միջոցների հոսքերի քանակը՝ կապված տվյալ ֆինանսական գործիքի հետ,

A – ներգրավված կամ տրամադրված միջոցի սկզբնական գումարը,

D_n – n-րդ դրամական հոսքի ստացման ժամանակահատվածը՝ արտահայտված առաջին հոսքից հետո անցած օրերի թվով (առաջին հոսքը՝ միջոցի ներգրավման կամ տրամադրման ամսաթիվն է):

Ինչպես ՀՏՏ, այնպես էլ ՄՍԷՏ-ը իրենց մեջ ներառում են ներգրավված և տեղաբաշխված միջոցների գծով բոլոր տոկոսային վճարները և չեն ներառում այլ վճարներ (միջնորդավճարներ և այլն): Նրանց տարբերությունը կայանում է վերջիններիս հաշվարկման հիմքում ընկած տոկոսադրույքների տարեկանացման մեթոդի մեջ: ՀՏՏ-ն կիրառելի է միայն այն դեպքերում, երբ ներգրավված/տեղաբաշխված միջոցների գծով տոկոսների կապիտալիզացիան կատարվում է կանոնավոր (հավասար) ժամանակահատվածներում: ՄՍԷՏ-ը հանդիսանում է արդյունավետ մոտարկում և կարող է կիրառվել ցանկացած տեսակի ներգրավված/տեղաբաշխված միջոցի պարագայում:

3-րդ և 4-րդ էջերի առանձին աղյուսակներում ներկայացվում են հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կնքված նոր գործարքների պայմանագրային գումարները՝ հազար դրամներով, ընդ որում, վարկային գծերի և օվերդրաֆտների գումարները չեն ընդգրկվում: Աղյուսակներում արտարժութային հոդվածները ներկայացվում են դրամական արտահայտությամբ՝ պայմանագրի կնքման օրվա դրությամբ Կենտրոնական բանկի կողմից հայտարարված՝ արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքներով:

5-րդ էջում արտացոլվում են տեղաբաշխված գումարների տարեկան փաստացի տոկոսադրույքները: Նշված տոկոսադրույքը հաշվարկվում է (2) բանաձևով և նույն մեթոդաբանությամբ, ինչ ՄՍԷՏ-ը, սակայն իր մեջ ներառում է ինչպես բոլոր տոկոսները, այնպես էլ **<u>այլ վճարումները,</u>** որոնք միջոց ստացողը **պարտավոր է** վճարել տվյալ միջոցը ստանալու համար: (2) բանաձևի տարրերը տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկելիս ունեն հետևյալ նշանակությունները.

i – տարեկան փաստացի տոկոսադրույքն է,

A – միջոց ստացողին տրամադրվող միջոցի սկզբնական գումարն է,

n – միջոցի մարմանն ուղղված վճարի հերթական համարն է,

K_n - միջոց ստացողի կողմից միջոցի ստացման պահին և(կամ) միջոցի գործողության ընթացքում կատարված հերթական n-րդ վճարի գումարն է (մայր գումար, տոկոսագումարներ և(կամ) **<u>այլ վճարումների</u>** գումարներ): Այն դեպքում, երբ միջոց տրամադրելու մասին պայմանագրով թույլատրվում են տոկոսների և (կամ) միջոց ստացողի ընդհանուր ծախսի մեջ ներառվող **այլ վճարների** քանակի կամ չափի փոփոխություններ, և հնարավոր չէ այդ փոփոխություններին տալ գումարային արտահայտություն, ապա տարեկան փաստացի տոկոսադրույքը պետք է հաշվարկվի՝ ենթադրելով, որ տոկոսները և (կամ) միջոց ստացողի ընդհանուր ծախսի մեջ ներառվող այլ վճարները մնալու են կայուն և կիրառվելու են մինչև միջոց ստանալու պայմանագրի գործողության ավարտը:

D_n - այն թիվն է, որը ցույց է տալիս, թե քանի օր է անցել միջոցի ստացման օրից մինչև միջոցի գումարի հերթական՝ n-րդ մարման օրը ներառյալ:

Օրինակ՝ վարկը տրամադրվել է սեպտեմբերի 15-ին, վարկի տրամադրման համար վարկի ստացման պահին նախատեսված են **այլ վճարումներ,** և վարկի առաջին մասնակի մարումը տեղի է ունենալու նույն տարվա հոկտեմբերի 15-ին: Այս դեպքում D_1=0, քանի որ **այլ վճարումները** կատարվելու են վարկի ստացման օրը, $D_2 = 30$, քանի որ վարկի տրամադրումից մինչև հերթական մարումն ընկած օրերի թիվը 30 է, իսկ D_3 – ից մինչև D_n ընկած օրերի թիվը հաշվարկվում է նույն սկզբունքով:

Միջոց ստացողի ընդհանուր ծախսի մեջ չեն ներառվում հետևյալ վճարները.

1) օրենքով և միջոց ստանալու պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար վճարված կամ վճարվելիք տուժանքները և այլ վճարները.

2) այն վճարները, որոնք միջոց ստացողի կողմից ենթակա են վճարման՝ անկախ ապրանքների, ծառայությունների կամ աշխատանքների դիմաց վճարումը տրամադրված միջոցով կամ առանց տրամադրված միջոցի կատարելու հանգամանքից,

3) կազմակերպություններին, միություններին կամ այլ խմբերին անդամակցելու կամ բաժանորդագրվելու համար նախատեսված վճարները, եթե միջոցի ստացման պայմանները կախված են նման անդամակցումից կամ բաժանորդագրումից: Բացառություն են կազմում կազմակերպություններին, միություններին կամ այլ խմբերին անդամակցելու կամ բաժանորդագրվելու համար նախատեսված վճարները, եթե միջոց տրամադրողը հանդիսանում է այդ կազմակերպությունների, միությունների կամ այլ խմբերի հիմնադիրը կամ մասնակիցը, և տրամադրվող միջոցի պայմանները կախված են նման անդամակցումից կամ բաժանորդագրումից: Օրինակ, վարկային կազմակերպությունը հայտարարում է վարկային պայմանագրի կնքման արտոնյալ պայմաններ այն անձանց համար, ովքեր

կիանդիսանան իր կողմից հիմնադրած միության անդամ: Անդամակցության համար պահանջվում է տարեկան անդամավճար: Տրամադրված միջոցի ժամկետի ընթացքում հաճախորդի կողմից վճարվելիք անդամավճար(ներ)ի գումարը պետք է ներառվի տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի մեջ:

4) ապահովագրության, գնահատման և այլ օժանդակ ծառայությունների դիմաց կատարվող վճարները, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ ծառայություններից օգտվելը հանդիսանում է միջոց տրամադրելու պայմանագիրը կնքելու կամ գովազդվող տարեկան փաստացի տոկոսադրույքը ստանալու նախապայման և

ա) այդ ծառայությունների շահառուն հանդիսանում է միջոց տրամադրողը, կամ

բ) միջոց տրամադրողը սահմանում է այն անձանց շրջանակը, որոնց հետ միջոց ստացողն իրավունք ունի կնքելու օժանդակ ծառայությունների մատուցման պայմանագրեր: Օրինակ, ապահովագրության, գնահատման և այլ օժանդակ ծառայությունների դիմաց կատարվող վճարները տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի մեջ ներառվում են, երբ

- վարկային կազմակերպությունը, որպես վարկային պայմանագիրը կնքելու նախապայման, պահանջում է գրավադրված գույքի ապահովագրություն, ինչպես նաև հանդիսանում է այդ պայմանագրի շահառուն,
- վարկային կազմակերպությունը, որպես վարկային պայմանագիրը կնքելու նախապայման, պահանջում է գրավադրված գույքի ապահովագրություն, ինչպես նաև սահմանում է այն անձանց շրջանակը, որոնց հետ հաճախորդն իրավունք ունի կնքել ապահովագրական ծառայությունների մատուցման պայմանագիր,
- վարկային կազմակերպությունը, որպես գովազդվող տարեկան փաստացի տոկոսադրույքը ստանալու նախապայման, պահանջում է գրավադրված գույքի ապահովագրություն, ինչպես նաև հանդիսանում է այդ պայմանագրի շահառուն,
- վարկային կազմակերպությունը, որպես գովազդվող տարեկան փաստացի տոկոսադրույքը ստանալու նախապայման, պահանջում է գրավադրված գույքի ապահովագրություն, ինչպես նաև սահմանում է այն անձանց շրջանակը, որոնց հետ հաճախորդն իրավունք ունի կնքել ապահովագրական ծառայությունների մատուցման պայմանագիր,
- վարկային կազմակերպությունը, որպես վարկային պայմանագիրը կնքելու նախապայման, պահանջում է գրավադրված գույքի ապահովագրություն, հանդիսանում է այդ պայմանագրի շահառուն, ինչպես նաև սահմանում է այն անձանց շրջանակը, որոնց հետ հաճախորդն իրավունք ունի կնքել ապահովագրական ծառայությունների մատուցման պայմանագիր,
- վարկային կազմակերպությունը, որպես գովազդվող տարեկան փաստացի տոկոսադրույքը ստանալու նախապայման, պահանջում է գրավադրված գույքի ապահովագրություն, հանդիսանում է այդ պայմանագրի շահառուն, ինչպես նաև սահմանում է այն անձանց շրջանակը, որոնց հետ հաճախորդն իրավունք ունի կնքել ապահովագրական ծառայությունների մատուցման պայմանագիր:

5) միջոց ստանալու հետ կապված այլ վճարները, որոնք միջոց ստացողը պարտավոր չէ կատարել միջոց ստանալու համար (օրինակ՝ բիզնես պլանի մշակման, միջոց ստացողի կողմից միջոց ստանալու համար բանկ այցելության տրանսպորտային ծախսերը):

Այն դեպքերում, երբ միջոց տրամադրելու պայմանագիրը պարունակում է դրույթներ, որոնք թույլատրում են տոկոսների և ընդհանուր ծախսի մեջ ներառվող այլ վճարների քանակի կամ չափի փոփոխություններ կամ տատանումներ, և հնարավոր չէ այդ փոփոխություններին տալ գումարային արտահայտություն, ապա տոկոսադրույքը պետք է հաշվարկվի ենթադրելով, որ տոկոսները և/կամ ընդհանուր ծախսի մեջ ներառվող այլ վճարները մնալու են կայուն և կիրառվելու են մինչև պայմանագրի գործողության ավարտը:

Այն դեպքում, երբ վարկը տրամադրվելու է մի քանի փուլերով, ապա ամբողջ պայմանագրին վերաբերող գրավադրված գույքի ապահովագրության վճարը, գնահատման և այլ օժանդակ ծառայությունների դիմաց կատարվող վճարները ներառվում են յուրաքանչյուր փուլի տարեկան տոկոսադրույքի հաշվարկում՝ համամասնորեն բաշխվելով փուլերի միջև:

Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկելիս անհրաժեշտության պարագայում գործում են հետևյալ սկզբունքները.

ա) պայմանագրով տրամադրված միջոցի առավելագույն սահմանաչափը սահմանված չլինելու դեպքում տրամադրված միջոցի առավելագույն չափը մեկ միլիոն դրամ է,

բ) եթե պայմանագրով նախատեսված է, որ հաճախորդը կարող է տրամադրված միջոցի գումարը ստանալ մաս առ մաս կամ կարող է ընտրել տրամադրված միջոցի

գումարը ստանալու պահը, ապա համարվում է, որ տրամադրված միջոցի գումարը հաճախորդին փոխանցվել է ամբողջությամբ պայմանագիրը կնքելու պահին,

գ) պայմանագրով տրամադրված միջոցի վերադարձման ժամանակացույցը կամ պայմանագրի դրույթներով վերադարձման ժամկետներ սահմանված չլինելու դեպքում տրամադրված միջոցի վերադարձման ժամկետը մեկ տարի է,

դ) այն դեպքում, երբ պայմանագիրը սահմանում է տրամադրված միջոցի վերադարձման մեկից ավելի ժամկետներ, ապա տրամադրված միջոցի վերադարձը կատարվում է պայմանագրով սահմանված ամենամոտ ժամկետում, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

,Հաշվետվության 5-րդ էջում օվերդրաֆտները և վարկային գծերն ընդգրկվում են ժամկետային միջոցների մասում՝ հաշվետու ժամանակաշրջանում

կնքված պայմանագրերի հիման վրա պայմանագրի ամբողջ գումարի չափով, ներառյալ չօգտագործված մասը:

3-րդ, 4-րդ և 5-րդ էջերում ընդգրկված տոկոսադրույքը ներկայացվում է՝ անտեսելով արտոնյալ ժամանակահատվածի (grace period) առանձնահատկությունները:

Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկում ծախսերը ընդգրկելիս անհրաժեշտ է առաջնորդվել հետևյալ սկզբունքով՝ արդյոք հաճախորդը պարտավոր է կատարել նշված ծախսերը վարկավորման համար, մասնավորապես.

- վարկի գումարի կանխիկացման համար գանձվող միջնորդավճարը չի մասնակցում արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկմանը, եթե վարկային գծի տրամադրման պայմանների համաձայն հաճախորդը հարկադրված չէ ստացած միջոցները կանխիկացնել:
- առևտրային վարկերի գծով արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկմանը մասնակցում են բոլոր այն վճարները, որոնք կատարվել են տվյալ հաճախորդի կողմից տվյալ վարկը ստանալու նպատակով, այդ թվում՝ բանկում ընթացիկ հաշվի բացման համար գանձվող կոմիսիոն վճարը, եթե ընթացիկ հաշիվը բացվել է անմիջապես վարկի տրամադրման համար:

Արտարժույթով վարկերի գծով արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկման ժամանակ Հայաստանի Հանրապետության դրամով գանձվող կոմիսիոն բոլոր վճարները

հաշվարկում ներառվում են պայմանագրի կնքման օրվա համար Կենտրոնական բանկի կողմից տեղեկացված՝ արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքով:

(15-րդ կետը լրաց. 04.11.08թ. թիվ 298Ն, խմբ. 18.11.08թ. թիվ 313Ն, խմբ., լրաց. 21.12.10թ. թիվ 343Ն, փոխ., լրաց. 29.05.12թ. թիվ 145Ն)

16. Թիվ 18 հաշվետվությունը բաղկացած է 3 աղյուսակներից: Տվյալները լրացվում են միայն հաշվետվության ազատ վանդակներում:

Հաշվետվության **I աղյուսակում** գրանցվում են վարկային կազմակերպության կողմից ոչ ռեզիդենտների հետ իրականացված բոլոր գործառնությունները, **II աղյուսակում**՝ միայն ոչ ռեզիդենտներից ներգրավված վարկերի և փոխառությունների ու դրանց սպասարկման վերաբերյալ տվյալները, իսկ **III աղյուսակում**՝ վարկային կազմակերպության պահանջների և պարտավորությունների դիրքերն իր ոչ ռեզիդենտ ուղղակի ներդրողի և իր հետ նույն խմբի մեջ մտնող ոչ ռեզիդենտ սուբյեկտների հետ ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

Հաշվետվությունը լրացվում է միլիոն դրամներով, բացառությամբ հաշվետվության II աղյուսակի 4-րդ սյան, որտեղ տվյալները լրացվում են համապատասխան արժույթի միավորով, ընդ որում, գումարները նշվում են ամբողջությամբ:

Հաշվետվության **I աղյուսակում** յուրաքանչյուր գործառնություն տարանջատվում է ըստ արժույթների. Հայաստանի Հանրապետության դրամ, ԱՄՆ դոլար, եվրո, ռուսական ռուբլի, ճապոնական իեն, ֆունտ ստերլինգ, շվեյցարական ֆրանկ, իրանական ռիալ և այլ արտարժույթ (ներառյալ՝ բանկային ոսկին):

Հաշվետվության I աղյուսակի մեջ լրացվող արտարժույթով արտահայտված բոլոր գումարները (բացառությամբ՝ ‚Կապիտալի արժեթղթերե բաժնի ‚Պասիվե մասում լրացվող տվյալների) վերածվում են դրամի՝ հաշվետու եռամսյակի վերջին օրվա դրությամբ համապատասխան արժույթի գործող հաշվարկային փոխարժեքով կամ հաշվարկային փոխարժեքի միջոցով հաշվարկված քրոս-կուրսով:

Հաշվետվության մեջ գործիքների ժամկետայնությունը տարանջատվում է հետևյալ ձևով՝ ‚Կարճաժամկետե տողում գրանցվում են տվյալներ այն գործիքների վերաբերյալ, որոնց պայմանագրային ժամկետը (վարկերի, ավանդների համար) կամ թողարկման պահին սկզբնական ժամկետայնությունը (արժեթղթերի համար) չի գերազանցում մեկ տարին ներառյալ, իսկ մնացածը գրանցվում է ‚Երկարաժամկետե տողում:

Բոլոր բաժինները, բացառությամբ ‚Շահաբաժիններե, ‚Հաշվեգրված տոկոսներե, ‚Եկամուտներ/ծախսերե տողերի, լրացվում են համապատասխան ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ անվանական գումարների (մայր գումարների) մնացորդների հիման վրա:

‚Շահաբաժիններե հոդվածի ‚Ակտիվե մասում լրացվում են տարեսկզբից աճողական տվյալներ սովորական բաժնետոմսերի գծով հայտարարված (ստացվելիք), արտոնյալ բաժնետոմսերի գծով հաշվեգրված (ստացվելիք) շահաբաժինների, իսկ ‚Պասիվե մասում՝ տարեսկզբից աճողական տվյալներ

սովորական բաժնետոմսերի մասով հայտարարված (վճարվելիք), արտոնյալ բաժնետոմսերի մասով հաշվեգրված (վճարվելիք) շահաբաժինների վերաբերյալ: Այն դեպքում, եթե արտոնյալ բաժնետոմսերի գծով շահաբաժինները չեն հաշվեգրվել, դրանք հաշվետվությունում արտացոլվում են այն պահին, երբ ճանաչվում են վճարման ենթակա: Եթե շահաբաժինները եռամսյակի ընթացքում փաստացի վճարվել են, դրանք չեն նվազեցվում շահաբաժինների կուտակային գումարից:

,Ակտիվե մասի ,Հաշվեգրված տոկոսներե տողերում լրացվում են ոչ ռեզիդենտներից ձեռք բերված պարտքային արժեթղթերի, նրանց տրամադրված վարկերի և փոխառությունների գծով հաշվեգրված տոկոսների, իսկ ,Պասիվե մասում՝ ոչ ռեզիդենտներին վաճառված պարտքային արժեթղթերի, նրանցից ներգրաված վարկերի և ավանդների գծով հաշվեգրված տոկոսների վերաբերյալ տվյալներ: Տվյալները լրացվում են աճողական կարգով՝ տարեսկզբից մինչև հաշվետու եռամսյակի վերջին օրվա դրությամբ հաշվեգրված տոկոսները: Ընդ որում, վարկերի և փոխառությունների դիմաց հաշվեգրված տոկոսները լրացնելիս անհրաժեշտ է տարանջատել դրանք ըստ արժույթների, այսինքն՝ յուրաքանչյուր արժույթով ներգրավված (տրամադրված) ավանդների կամ վարկերի գծով հաշվեգրված տոկոսները անհրաժեշտ է լրացնել համապատասխան արժույթի սյան մեջ, այլ ոչ թե, օրինակ, բոլոր հաշվեգրված ծախսերը (եկամուտները) արտացոլել դրամային սյան մեջ, այն պատճառով, որ տոկոսային եկամուտների հաշվեգրումը կատարվում է դրամով: Այս տողում չեն ներառվում առանձին գործիքների գծով ոչ տոկոսային եկամուտներն ու ծախսերը:

Ֆինանսական ածանցյալների գծով ,Եկամուտներ/ծախսերե տողի ,Ակտիվե մասում լրացվում են ոչ ռեզիդենտների հետ կնքված ածանցյալ գործիքների (ֆյուչերս, ֆորվարդ, սվոպ, օպցիոն) իրական արժեքի փոփոխության գծով եկամուտները (ոչ տոկոսային եկամուտներ), ինչպես նաև ածանցյալ գործիքների գծով տոկոսային եկամուտները, իսկ ,Պասիվե մասում՝ ոչ ռեզիդենտների հետ կնքված ածանցյալ գործիքների իրական արժեքի փոփոխության գծով ծախսերը (ոչ տոկոսային ծախսեր), ինչպես նաև ածանցյալ գործիքների գծով տոկոսային ծախսերը: Ընդ որում, տվյալները կարող են լրացվել համախմբված ձևով դրամով սյան մեջ:

Առաջին եռամսյակի հաշվետվությունում անհրաժեշտ է ներկայացնել միայն հաշվետու ժամանակաշրջանի գործիքների գծով շահաբաժինները, հաշվեգրված տոկոսները և եկամուտներ/ծախսերը՝ թողնելով նախորդ ժամանակաշրջանի համապատասխան տողերը դատարկ: ,Կապիտալի արժեթղթերե բաժնի ,Ակտիվե մասում լրացվում են վարկային կազմակերպության կողմից որևէ ոչ ռեզիդենտ կազմակերպության բաժնետիրական կապիտալում կատարված ուղղակի և պորտֆելային ներդրումները, իսկ ,Պասիվե մասում՝ վարկային կազմակերպության բաժնետիրական կապիտալում ոչ ռեզիդենտների կողմից կատարված ուղղակի և պորտֆելային ներդրումները:

Կապիտալի արժեթղթերի հետ կապված գործարքների բաժանումը ,Ուղղակի ներդրումներիե և ,Պորտֆելային ներդրումներիե՝ կատարվում է հետևյալ սկզբունքներով.

Ուղղակի (նշանակալից մասնակցություն) համարվում են այն ներդրումները, որոնց գումարը կազմում է ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսը, իսկ պորտֆելային (ոչ նշանակալից մասնակցություն)՝ այն ներդրումները, որոնց գումարը կազմում է ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի մինչև 10 տոկոսը:

Կապիտալ արժեթղթերում ներառվում են նաև արտոնյալ բաժնետոմսերը, որոնք ապահովում են իրավունք ընկերության մնացորդային արժեքի նկատմամբ: Եթե ընկերության արտոնյալ բաժնետոմսերը գտնվում են ոչ ռեզիդենտ ուղղակի ներդրողի մոտ, ապա ներառվում են ուղղակի ներդրումներում, իսկ եթե դրանք գտնվում են ոչ ռեզիդենտ պորտֆելային ներդրողի մոտ, ապա ներառվում են պորտֆելային ներդրումներում:

,Ներդրումային հիմնադրամներում փայաբաժիններե հոդվածը լրացվում է միայն ,Ակտիվե մասում՝ տարեսկզբից աճողական տվյալներ ոչ ռեզիդենտ ներդրումային հիմնադրամներում ունեցած փայաբաժինների դիրքի վերաբերյալ: Այս բաժինը տարանջատվում է ըստ ժամկետայնության սկզբունքի՝ կարճաժամկետ և երկարաժամկետ (ժամկետայնության որոշումը տես վերևում): ,Շահաբաժիններե մասում լրացվում են ոչ ռեզիդենտ ներդրումային հիմնադրամներում ունեցած փայաբաժինների գծով հայտարարված (ստացվելիք) շահաբաժինների վերաբերյալ տվյալներ ըստ արժութային բաշխվածքի:

,Պարտքային արժեթղթերե բաժնի ,Ակտիվե մասում լրացվում են ոչ ռեզիդենտների կողմից թողարկված և վարկային կազմակերպության կողմից ձեռք բերված ցանկացած տեսակի պարտքային արժեթղթերի և դրանց հետ կապված ստացվելիք տոկոսների վերաբերյալ տվյալներ, իսկ ,Պասիվե մասում՝ հաշվետու վարկային կազմակերպության կողմից թողարկված և ոչ ռեզիդենտների կողմից ձեռք բերված պարտքային արժեթղթերի և դրանց հետ կապված վճարվելիք տոկոսների վերաբերյալ տվյալներ: Այս բաժնում ներառվում են պարտատոմսերը, մուրհակները և այլ արժեթղթերը:

,Կանխիկ արտարժույթե բաժնում լրացվում են վարկային կազմակերպության կանխիկ արտարժութային միջոցների վերաբերյալ տվյալներ՝ ներառյալ կանխիկը ճանապարհին:

,Վարկեր, այդ թվում՝ օվերդրաֆտ և վարկային քարտերե բաժնի ,Ակտիվե մասում լրացվում են վարկային կազմակերպության կողմից ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի և դրանց հետ կապված ստացվելիք տոկոսների (հաշվեգրված, սակայն չստացված տոկոսների) հաշվեկշռային անվանական գումարները: ,Պասիվե մասում լրացվում են ոչ ռեզիդենտների կողմից վարկային կազմակերպությանը տրամադրված վարկերի և դրանց հետ կապված վճարվելիք տոկոսների (հաշվեգրված չվճարված տոկոսների) գումարները: Ընդ որում՝

վարկային գծերի և օվերդրաֆտների ծավալները գրանցվում են փաստացի մնացորդի (օգտագործված մասի) չափով: Այս բաժնում պետք է ներառել նաև ռեպո գործառնությունների (բացառությամբ արտարժութային ռեպո գործարքների), ֆակտորինգի և ֆինանսական վարձակալության հետևանքով առաջացած պահանջներն ու պարտավորությունները:

,Ավանդներ/փոխառություններ բաժինը լրացվում է ,Վարկեր, այդ թվում՝ օվերդրաֆտ և վարկային քարտերե բաժնի լրացման սկզբունքով: ,Ավանդներ/փոխառություններ բաժնում լրացվում են բանկային հաշիվների, ժամկետային ու ցպահանջ ավանդների, փոխառությունների, ինչպես նաև թղթակցային ,նոստրոե և ,լորոե հաշիվների ու դրանց հետ կապված ստացվելիք (վճարվելիք) տոկոսների վերաբերյալ տվյալները:

Ֆինանսական ածանցյալ գործիքները ներառում են ոչ ռեզիդենտների հետ ֆորվարդ, ֆյուչերս, օպցիոն, սվոփ և այլ ածանցյալ գործիքների դիրքերը, ընդ որում՝ գործիքի իրական արժեքի նվազումը արտացոլվում է ,Պասիվ մասում, իսկ իրական արժեքի աճը՝ ,Ակտիվ մասում:

,Ապրանքների, ծառայությունների և կատարված աշխատանքների դիմաց կանխավճարներ և հետաձգված վճարներ բաժնի ,Ակտիվ մասում լրացվում են տվյալներ ապրանքների, ծառայությունների դիմաց վարկային կազմակերպության կողմից տրված կանխավճարները, ինչպես նաև ոչ ռեզիդենտներից ապրանքների կամ ծառայությունների դիմաց ստացվելիք գումարները: ,Պասիվ մասում լրացվում են վարկային կազմակերպությանը ծառայությունների դիմաց տրված կանխավճարների, ինչպես նաև ստացված ապրանքների, ծառայությունների և կատարված աշխատանքների դիմաց ոչ ռեզիդենտներին վճարվելիք գումարների վերաբերյալ: Այս բաժնի ,Ակտիվ մասում լրացվում են նաև վարկային կազմակերպության կողմից ոչ ռեզիդենտներին, իսկ ,Պասիվ մասում՝ ոչ ռեզիդենտների կողմից վարկային կազմակերպությանը մատուցված ծառայությունների (փոխանցումներ, հավատարմագրային կառավարում, արժեթղթերի փաթեթի կառավարում, խորհրդատվական ծառայություններ, պահառություն, փոխարկումներ, երաշխիքներ, ակրեդիտիվներ կամ այլ նմանատիպ ծառայություններ), վարկերի սպասարկման վճարների, վարկային գծերի չօգտագործված մասի դիմաց հաշվարկվող եկամուտների/ծախսերի գծով ստացվելիք/վճարվելիք գումարների վերաբերյալ տվյալներ: Աշխատավարձի գծով վճարվելիք գումարները ներառվում են ,Այլ գործառնությունների դիմաց ստացվելիք/վճարվելիք գումարներե բաժնում:

,Այլ գործառնությունների դիմաց ստացվելիք/վճարվելիք գումարներե բաժնում լրացվում են այն բոլոր գործառնությունները, որոնք տվյալ վարկային կազմակերպությունը իրականացնում է ոչ ռեզիդենտների հետ և որոնք չեն հանդիսանում վերը նշված գործառնություններից և ոչ մեկը:

,Ժամկետանց պահանջներ և պարտավորություններե բաժնի ,Ակտիվ մասում լրացվում են հաշվեկշռային տվյալներ վարկային կազմակերպության

կողմից ոչ ռեզիդենտների նկատմամբ ունեցած ժամկետանց պահանջների, իսկ ,Պասիվ մասում՝ ոչ ռեզիդենտների նկատմամբ ունեցած ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

,Արտահաշվեկշռում հաշվառված ակտիվներե բաժնում լրացվում է տեղեկատվություն հաշվեկշռից դուրս գրված վարկերի, դեբիտորական պարտքերի և դուրս գրված այլ ակտիվների վերաբերյալ, ընդ որում, դրանց գծով նախկինում հաշվեգրված տոկոսները ներառվում են գործիքի գումարի մեջ: Յուրաքանչյուր նման գործառնություն ներկայացվում է արժութային բաշխվածքով և վերածվում է դրամի՝ հաշվետու եռամսյակի վերջին օրվա դրությամբ համապատասխան արժույթի գործող հաշվարկային փոխարժեքով:

,Հաշվեկշռից դուրս գրված ակտիվների գծով կորուստների վերականգնումե բաժնում լրացվում են այն մարումները, որոնք ստացվել են հաշվեկշռից դուրս գրված վարկերի, դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների դիմաց:

,Արտահաշվեկշռից դուրս գրված/ներված ակտիվներ և պարտավորություններե բաժնի ,Ակտիվե մասում լրացվում են վարկային կազմակերպության կողմից ներված վարկերը, դեբիտորական պարտքերը և ներված այլ ակտիվները, ինչպես նաև դրանց հետ կապված բոլոր եկամուտները, իսկ ,Պասիվե մասում գրանցվում են վարկային կազմակերպությանը ներված վարկերը, կրեդիտորական պարտքերը և այլ պարտավորություններ, ինչպես նաև դրանց հետ կապված բոլոր ծախսերը:

Հաշվետվության I մասի 4-րդ կետի՝ ,Վարկեր, այդ թվում՝ օվերդրաֆտ և վարկային քարտերե բաժնի ,Պասիվե մասի վերաբերյալ մանրամասն տվյալները հավաքագրվում են սույն հաշվետվության **II աղյուսակում**: Հաշվեկշռային տվյալները լրացվում են անվանական, այլ ոչ թե ամորտիզացված արժեքով: Հաշվետվության II աղյուսակը լրացվում է հետևյալ կերպ.

2-րդ սյունակում նշվում է վարկ տրամադրող ոչ ռեզիդենտի գրանցման երկիրը: Այն դեպքում, երբ վարկը տրամադրված է միջազգային ֆինանսական կազմակերպության կողմից, սյան մեջ նշվում է կազմակերպության անունը (օրինակ, Միջազգային Ֆինանսական Կորպորացիա): (Միջազգային կազմակերպությունների բնորոշումը տրված է Հավելված 18.2-ում):

3-րդ սյունակում նշվում է վարկ տրամադրող ոչ ռեզիդենտի հատվածի պատկանելությունը՝ ըստ հետևյալ տառերի.

ա) Ֆ-ն ընդգրկում է ոչ ռեզիդենտ բանկերը, վարկային կազմակերպությունները, ներդրումային ընկերությունները, ներդրումային հիմնադրամները, փոխադարձ հիմնադրամները (mutual funds), դրամական շուկայի հիմնադրամները, բորսաները, այլ ոչ բանկային ֆինանսական հաստատությունները (բացառությամբ ապահովագրական ընկերությունները և կենսաթոշակային հիմնադրամները),

բ) Մ-ն ընդգրկում է միջազգային ֆինանսական կազմակերպությունները (միջազգային ֆինանսական կազմակերպությունների ավելի մանրամասն բացատրությունները տես ,Միջազգային ֆինանսական կազմակերպություններե 18.2 հավելվածում),

գ) Պ-ն ընդգրկում է այլ պետությունների կառավարությունները (կենտրոնական և տեղական մակարդակներով),

դ) Ի-ն ընդգրկում է Ֆ-ում և Պ-ում չներառված ոչ ռեզիդենտ կազմակերպությունները (այսինքն՝ պետական մասնակցությամբ կազմակերպությունները, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ պետական կազմակերպությունները, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող սուբյեկտները և շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունները, ապահովագրական ընկերությունները և կենսաթոշակային հիմնադրամները),

ե) Եթե Ֆ-ն, Մ-ն, Պ-ն կամ Ի-ն տվյալ վարկային կազմակերպության համար հանդիսանում է ուղղակի ներդրող կամ նույն խմբի մեջ մտնող սուբյեկտ (ուղղակի ներդրողի և նույն խմբի մեջ մտնող սուբյեկտների մանրամասն սահմանումները Հավելված 18.1-ում), ապա համապատասխան տառերը գրվում են շտրիխներով (Ֆ’, Մ’, Պ’ կամ Ի’):

4-րդ սյունակում լրացվում է յուրաքանչյուր պարտքային գործիքի տեսակը, այսինքն՝ վարկ, ռեպո գործառնություն, օվերդրաֆտ կամ օվերնայթ:

5-րդ, 6-րդ սյունակներում նշվում են վարկի գումարը վարկային պայմանագրում նշված արժույթով (գումարը լրացվում է ամբողջությամբ) և արժույթի՝ Ստանդարտների միջազգային կազմակերպության կոդը:

7-րդ սյունակում լրացվում է վարկային պայմանագրում նշված վարկի ներգրավման ամսաթիվը՝ հետևյալ ֆորմատով՝ 25/03/12:

8-րդ սյունակում լրացվում է վարկային պայմանագրում նշված վարկի մարման ժամկետը՝ հետևյալ ֆորմատով՝ 25/06/17:

Եթե վարկային պայմանագրով նախատեսված չէ մարման ժամկետ և տոկոսադրույք, այսինքն՝ վարկը ստացվում է առանձին մասնաբաժիններով և դրանցից յուրաքանչյուրի համար սահմանված են առանձին պայմաններ, ապա յուրաքանչյուր մասնաբաժնի համար տվյալները լրացվում են առանձին տողերի համապատասխան սյուներում:

9-րդ, 10-րդ, 11-րդ և 12-րդ սյունակներում լրացվում են վարկի սպասարկման պայմանները, համապատասխանաբար՝ վարկի դիմաց տոկոսագումարի վճարման պարբերականությունը (միանվագ, ամսական, եռամսյակային, կիսամյակային, տարեկան կամ ոչ պարբերական), տոկոսագումարի առաջին վճարման ամսաթիվը, հիմնական գումարի մարման պարբերականությունը (միանվագ, ամսական, եռամսյակային, կիսամյակային, տարեկան կամ ոչ պարբերական) և վարկի հիմնական գումարի առաջին վճարման ամսաթիվը: Բոլոր ամսաթվերը պետք է նշվեն հետևյալ ֆորմատով՝ 25/06/2010: 13-

րդ սյունակում նշվում է վարկի տոկոսադրույքը: Եթե, օրինակ, տոկոսադրույքը կազմում է ԼԻԲՕՐ գումարած 5%, ապա այն լրացվում է ,ԼԻԲՕՐ+5ե:

14-րդ սյունակում լրացվում են հաշվետու եռամսյակի սկզբի դրությամբ ոչ ռեզիդենտներից ներգրավված վարկերի անվանական գումարների մնացորդները:

15-րդ սյունակում նշվում են հաշվետու եռամսյակի ընթացքում տվյալ վարկային պայմանագրի շրջանակներում կատարված վարկային մուտքերը:

16-րդ սյունակում լրացվում է հաշվետու եռամսյակում վարկի մայր գումարի մարմանն ուղղված վճարումների ծավալը: Տվյալ եռամսյակում մայր գումարի միանվագ մարումը նշվում է ամբողջ ծավալով:

17-րդ և 18-րդ սյունակներում լրացվում են համապատասխանաբար եռամսյակի ընթացքում վարկի դիմաց հաշվեգրված և փաստացի վճարված տոկոսագումարները:

19-րդ սյունակում լրացվում է եռամսյակի վերջի դրությամբ ոչ ռեզիդենտներից ներգրավված վարկերի անվանական գումարների մնացորդները:

20-րդ սյունակում լրացվում են հաշվեգրված, սակայն եռամսյակի վերջի դրությամբ չվճարված տոկոսագումարները:

Հաշվետվության **III աղյուսակում** լրացվում են վարկային կազմակերպության պահանջների և պարտավորությունների դիրքերն իր ոչ ռեզիդենտ ուղղակի ներդրողի, ոչ ռեզիդենտ ուղղակի ներդրման ընկերության և իր հետ նույն խմբի մեջ մտնող ոչ ռեզիդենտ սուբյեկտների հետ ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Յուրաքանչյուր սուբյեկտի նկատմամբ պահանջներն ու պարտավորությունները լրացվում են առանձին:

Ուղղակի ներդրող է համարվում այն ոչ ռեզիդենտ սուբյեկտը, որն իրականացրել է ներդրումներ վարկային կազմակերպության բաժնետիրական կապիտալում կամ ձեռք է բերել փայամասնակցություն և ստացել է ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10% և ավելին: Համապատասխանաբար, ուղղակի ներդրման ընկերություն է համարվում այն ոչ ռեզիդենտ կազմակերպությունը, որի կապիտալում վարկային կազմակերպությունն ունի 10% և ավելի ձայնի իրավունք տվող մասնակցություն:

Նույն խմբի մեջ մտնող են համարվում վարկային կազմակերպության հետ անուղղակիորեն ուղղակի ներդրման հարաբերություններում ներգրավված ոչ ռեզիդենտ ընկերությունները, որոնք ունեն ընդհանուր ուղղակի ներդրող, կամ հանդիսանում են ուղղակի ներդրումային շղթայի մի մաս (օրինակ. նույն մայր ընկերության՝ տարբեր երկրներում գտնվող երկու ուղղակի ներդրումներով ձեռնարկությունները):

Ուղղակի ներդրողների և նույն խմբի մեջ մտնող կազմակերպությունների ավելի մանրամասն նկարագրությունը տրված է ,Ուղղակի ներդրումներ և նույն խմբի մեջ մտնող կազմակերպություններե 18.1 հավելվածում:

Այս բաժնում ուղղակի ներդրողների կամ նրանց հետ կապված անձանց նկատմամբ պահանջը կամ պարտավորությունը պետք է լրացվեն այն դեպքում, եթե դրանք գերազանցում են 5 մլն դրամը (չի վերաբերվում հաշվեգրված տոկոսներին, որոնք ներառվում են յուրաքանչյուր գործիքի հետ մեկտեղ):

Աղյուսակում գործիքները ներկայացվում են խմբավորված ըստ տեսակների, ընդ որում՝ տարանջատումը իրականացվում է ըստ ժամկետայնության սկզբունքի:

Աղյուսակի վերջում լրացվում են ուղղակի ներդրողների և նույն խմբի մեջ մտնող սուբյեկտների գործիքների գծով հաշվեգրված տոկոսային եկամուտները/ծախսերը, իսկ բաժնետիրական կապիտալում ներդրման գծով՝ հայտարարված շահաբաժինները՝ համախմբված ձևով: Տվյալները լրացվում են տարեսկզբից աճողական կարգով: ,Հաշվեգրված տոկոսային եկամուտներ/ծախսեր, հայտարարված շահաբաժիններ ոչ ռեզիդենտ ուղղակի ներդրող կամ նույն խմբի մեջ մտնող ֆինանսական ընկերությունների նկատմամբ (բացառությամբ ապահովագրական ընկերությունների և կենսաթոշակային հիմնադրամների)ե տողում լրացվում են միայն ֆինանսական ընկերություններ (բացառությամբ ապահովագրական ընկերությունների և կենսաթոշակային հիմնադրամների) հանդիսացող ուղղակի ներդրողների, ուղղակի ներդրման ձեռնարկությունների և նույն խմբի մեջ մտնող ընկերությունների գծով հաշվարկված տոկոսային եկամուտները/ծախսերը, կամ հայտարարված շահաբաժինները:

Հաշվետվության III աղյուսակը լրացվում է հետևյալ կերպ.

1-ին սյունակում լրացվում է տեղեկատվություն սուբյեկտի վերաբերյալ՝ ուղղակի ներդրող է (ուղղակի ներդրող), ուղղակի ներդրման ընկերություն (ուղղակի ներդրման ընկերություն), թե նույն խմբի մեջ մտնող (նույն խմբի մեջ մտնող ընկերություն):

2-րդ սյունակում նշվում է տվյալ սուբյեկտի գրանցման երկիրը (ֆիզիկական անձանց դեպքում ռեզիդենտության երկիրը): Այն դեպքում, երբ ուղղակի ներդրողը կամ նույն խմբի մեջ մտնող ընկերությունը հանդիսանում է միջազգային ֆինանսական կազմակերպություն, սյան մեջ նշվում է կազմակերպության անունը (օրինակ, Միջազգային Ֆինանսական Կորպորացիա): (Միջազգային կազմակերպությունների բնորոշումը տրված է Հավելված 18.2-ում):

3-րդ սյունակում նշվում է տվյալ սուբյեկտի հատվածի պատկանելությունը՝ աղյուսակ II-ի նմանությամբ (տառերը չեն նշվում շտրիխով):

4-րդ և 9-րդ սյունակներում լրացվում են համապատասխանաբար տվյալ սուբյեկտի բաժնետիրական կապիտալում ունեցած ներդրումները (ներառյալ՝ արտոնյալ բաժնետոմսերի տեսքով), իսկ պարտավորություններում՝ նրա կողմից տվյալ ընկերության բաժնետիրական կապիտալում ներդրումները (ներառյալ՝ արտոնյալ բաժնետոմսերը):

5-րդ և 10-րդ սյունակներում լրացվում են համապատասխանաբար վարկերի և փոխառությունների գծով ,Պահանջներե մասում տվյալ սուբյեկտին տրամադրված վարկերը, փոխառությունները, ռեպո համաձայնագրերով

տրամադրված միջոցները, օվերդրաֆտները, ֆինանսական լիզինգը, ֆակտորինգը և վարկային գծերի օգտագործված մասերը, իսկ ,Պարտավորություններե մասում՝ նրանից ստացված վարկերը, փոխառությունները, ռեպո համաձայնագրերով ստացված միջոցները, օվերդրաֆտները, ֆինանսական լիզինգը, ֆակտորինգը և վարկային գծերի օգտագործված մասերը:

6-րդ և 11-րդ սյունակներում լրացվում են համապատասխանաբար ավանդների գծով ,Պահանջներե մասում վարկային կազմակերպության կողմից տվյալ սուբյեկտի մոտ ներդրված ցպահանջ և ժամկետային ավանդները, թղթակցային հաշիվները և դրանց հավասարեցված միջոցները, իսկ ,Պարտավորություններե մասում՝ վարկային կազմակերպությունում նրա կողմից ներդրված ցպահանջ և ժամկետային ավանդները, թղթակցային հաշիվները և դրանց հավասարեցված միջոցները:

7-րդ և 12-րդ սյունակներում լրացվում են համապատասխանաբար պարտատոմսերի և այլ պարտքային արժեթղթերի գծով ,Պահանջներե մասում՝ տվյալ սուբյեկտի պարտատոմսերում և այլ պարտքային արժեթղթերում վարկային կազմակերպության իրականացրած ներդրումները, իսկ ,Պարտավորություններե մասում՝ նրա կողմից իրականացրած ներդրումները վարկային կազմակերպության պարտատոմսերում և այլ պարտքային արժեթղթերում:

8-րդ և 13-րդ սյունակներում լրացվում են տվյալ սուբյեկտի նկատմամբ ունեցած այն բոլոր պահանջներն ու պարտավորություններն են, որոնք ներառված չեն նախորդ խմբերում:

(16-րդ կետը խմբ. 26.02.08թ. թիվ 51Ն, փոխ., խմբ., լրաց. 21.12.10թ. թիվ 343Ն, խմբ. 29.05.12թ. թիվ 145Ն)

17. Չև թիվ 19 (օրական) հաշվետվությունը լրացնում են արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններ իրականացնող վարկային կազմակերպությունները: Թիվ 19 հաշվետվության մեջ լրացվում են հաշվետու օրվան նախորդող օրվա ընթացքում, ինչպես նաև հաշվետու օրվան նախորդող օրվա ժամը 14:30-ից մինչև հաշվետու օրվա ժամը 14:30-ը իրականացված արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունները:

Ֆայլի անվանումը պետք է ունենա թվային «թթթթ_19.xls » ֆորմատը, որտեղ թթթթ-ն հաշետվությունն ուղարկող վարկային կազմակերպության կոդն է, 19-ը՝ թիվ 19 հաշվետվության նույնացուցիչը:

Թիվ 19 (օրական) հաշվետվությունը կազմելիս պետք է հետևել աղյուսակում բերված կանոններին.

No	Անվանում	Տեսք	Նշումներ
1	Վարկային կազմակերպության կոդը և անվանումը	5n և 50x[1]	Վարկային կազմակերպության կոդը մուտքագրվում է C6 հասցեում՝ իսկ անվանումը՝ D6
2	Ամսաթիվը	2n/2n/4n	Մուտքագրվում է C7 հասցեում
3	Գրառման համարը (No)	2n	Մուտքագրվում է աղյուսակի A սյունակում՝ սկսած 11-րդ տողից

4	Գործարքի տեսակը	1n/1n/1n/1n	Մուտքագրվում է աղյուսակի B սյունակում՝ սկսած 11-րդ տողից
5	Գործարքի արժույթները (սակարկվող/գնանշվող)	3a/3a	Մուտքագրվում է աղյուսակի C սյունակում՝ սկսած 11-րդ տողից
6	Առքի ծավալը (արտարժույթով)	թվային	Մուտքագրվում է աղյուսակի D սյունակում՝ սկսած 11-րդ տողից
7	Առքի միջին կշռված փոխարժեքը	թվային	Մուտքագրվում է աղյուսակի E սյունակում՝ սկսած 11-րդ տողից
8	Վաճառքի ծավալը (արտարժույթով)	թվային	Մուտքագրվում է աղյուսակի F սյունակում՝ սկսած 11-րդ տողից
9	Վաճառքի միջին կշռված փոխարժեքը	թվային	Մուտքագրվում է աղյուսակի G սյունակում՝ սկսած 11-րդ տողից

[1] - Աղյուսակում ընդունված են հետևյալ նշանակումները.

x-տառաթվային, n-թվային, a-տառային, n-տվյալը պետք է պարտադիր ներկայացված լինի նշված քանակի նիշերով:

Ամսաթիվը պետք է լրացված լինի «օր/ամիս/տարի» տեսքով: Այն դեպքերում, երբ վարկային կազմակերպությունն աշխատել է հանգստյան օրերին, ապա այդ օրերին իրականացված գործառնությունների վերաբերյալ տվյալները գրանցվում են որպես հանգստյան կամ տոն օրվան նախորդող աշխատանքային օրվա ժ.14:30-ից հետո իրականացված գործարքներ:

«Գործարքի տեսակը» սյունակում լրացվում է գործարքի կոդը, որը բաղկացած է չորս պարամետրերից և ունի հետևյալ տեսքը՝ «1n/1n/1n/1n», որտեղ առաջին պարամետրը ցուցադրում է, թե ում միջև է կատարվել գործարքը և այն կարող է ունենալ հետևյալ արժեքները.

«1» - գործառնություններ ռեզիդենտ վարկային կազմակերպությունների միջև,

«3» - գործառնություններ վարկային կազմակերպությունների տարածքում, ինչպես նաև գործառնությունների ոչ ռեզիդենտ վարկային կազմակերպության հետ:

Երկրորդ պարամետրը ցույց է տալիս գործարքի տեսակը և կարող է ունենալ հետևյալ արժեքները.

«1» - SPOT տեսակի գործառնություններ,

«2» - ածանցյալ գործառնություններ (արժութային սվոփ, ֆորվարդ, ֆյուչերս, օպցիոն):

Երրորդ պարամետրը ցույց է տալիս գործարքի մասնակցի տեսակը. «1» - ռեզիդենտների համար, «2» - ոչ ռեզիդենտների համար:

Չորրորդ պարամետրը ցույց է տալիս գործարքի իրականացման ժամկետը՝

«1» - նախորդ օրվա ժամը 14:30-ից մինչև տվյալ օրվա ժամը 14:30-ը,

«2» - նախորդ օրվա ընթացքում իրականացված:

Օրինակ՝ 3/2/1/2՝ ռեզիդենտների հետ իրականացված վարկային կազմակերպության տարածքում կնքված ածանցյալ գործառնություն՝ իրականացված նախորդ օրվա ընթացքում:

«3/1/1/1» և(կամ) 3/1/1/2 կոդերի տակ պետք է ներկայացնել նաև ներքին արժութային շուկայում բաժնետոմսերի միջոցով իրականացված փոխարկումների ծավալները:

«Գործարքի արժույթներ» սյունակը պետք է լրացվի տարադրամների ISO կոդերի տեսքով, անգլերեն տառերով՝ օգտագործելով «/» նշանը որպես բաժանիչ առանց չակերտների, օրինակ՝ USD/AMD, ընդ որում համարիչում գրվում է սակարկվող արժույթի նշանը, հայտարարում՝ գնանշվող:

«Առքի ծավալ» և «Վաճառքի ծավալ» սյունակներում լրացվում են, համապատասխանաբար, գնվող և վաճառվող (սակարկվող) արժույթների ծավալները:

«Առքի միջին կշռված փոխարժեք» և «Վաճառքի միջին կշռված փոխարժեք» սյունակներում, համապատասխանաբար, լրացվում են տվյալ տիպի գործարքի միջին կշռված փոխարժեքները՝ յուրաքանչյուր արտարժույթի տեսակի գծով, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

ՄՓառք= (ԱԾ1*ԱՓ1+ԱԾ2*ԱՓ2+...+ԱԾn*ԱՓn) / (ԱԾ1+ԱԾ2+...+ԱԾn),

ՄՓվաճառք= (ՎԾ1*ՎՓ1+ՎԾ2*ՎՓ2+...+ՎԾn*ՎՓn) / (ՎԾ1+ՎԾ2+...+ՎԾn), որտեղ՝

ՄՓառք (ՄՓվաճառք) - առքի (վաճառքի) միջին փոխարժեք,

ԱԾi (ՎԾi) - «i »-րդ գործարքի առքի (վաճառքի) ծավալ,

ԱՓi (ՎՓi) - «i»-րդ գործարքի առքի (վաճառքի) փոխարժեք,

«i» - փոփոխական թիվ, որը փոխվում է 1-ից «n»:

Սույն հաշվարկը կատարվում է արտարժույթի յուրաքանչյուր տեսակի համար, որով գործարք է կատարվել:

Փոխարժեքները պետք է ներկայացվեն սակարկվող արժույթի ուղիղ գնանշման տեսքով, այսինքն՝ ցույց տան արտարժույթի փոխարժեքը 1 ԱՄՆ դոլարի նկատմամբ, բացառությամբ՝ անգլիական ֆունտ ստեռլինգի և եվրոյի փոխարժեքների:

Մուտքագրվող տեղեկությունները չպետք է ընդհատվեն և պարունակեն դատարկ տողեր կամ 0:

Սփոթ տիպի գործարքները հաշվետվության մեջ գրանցվում են գործարքի կնքման օրը:

(17-րդ կետը խմբ. 21.11.06թ. թիվ 691Ն, խմբ. 22.09.10թ. թիվ 241Ն, փոխ. 21.12.10թ. թիվ 343Ն)

18. Հավելված 1-ի ձև թիվ 20 հաշվետվության «Կազմակերպության հաշիվները» աղյուսակում բերվում են տեղեկություններ հաշվետու ժամանակահատվածի վերջին օրվա դրությամբ կազմակերպության հաշիվների քանակի վերաբերյալ, որոնք տարանջատվում են «ՀՀ տարածքում գործող բանկերում» և «Արտասահմանում գործող բանկերում» բացված հաշիվների:

«Ընթացիկ հաշիվներ» սյունակում նշվում են Կազմակերպության անունով բացված այն ցպահանջ ավանդները և բանկային հաշիվները (դրամով և արտարժույթով հաշվարկային հաշիվներ, չեկային հաշիվներ, հաշվարկների իրականացման համար նախատեսված այլ հաշիվներ) որոնցով տեղի է ունեցել միջոցների շարժ (ոչ վերագնահատման շարժ) վերջին 1 տարվա ընթացքում:

«Ժամկետային հաշիվներ» սյունակում նշվում են Կազմակերպության անունով բացված ժամկետային ավանդների (դրամով և արտարժույթով) հաշիվները, որոնց վրա կա մնացորդ:

«Հաճախորդների քանակը» աղյուսակում բերվում են տվյալներ կազմակերպության «Տնտեսվարող սուբյեկտներ» և «ֆիզիկական անձինք» հաճախորդների վերաբերյալ՝ հաշվետու ժամանակահատվածի վերջին օրվա դրությամբ: Հաճախորդներ են համարվում այն տնտեսվարող սուբյեկտները և ֆիզիկական անձինք, որոնք կազմակերպության հանդեպ ձեռք են բերել իրավունքներ և/կամ ստանձնել են որոշակի պարտավորություններ կազմակերպությանը տրամադրված լիցենզիայի համաձայն վերջինիս վերապահված գործառնությունների իրականացման ժամանակ (բացառությամբ կազմակերպության կողմից թանկարժեք մետաղների և ձուլակտորների ի պահ ընդունման ծառայության):

«Տնտեսվարող սուբյեկտեր» տողում բերվում են տվյալներ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց (բացի բանկերից) վերաբերյալ:

«Ֆիզիկական անձինք» տողում բերվում են տվյալներ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց վերաբերյալ:

«Կատարված կանխիկ և անկանխիկ գործառնություններ» աղյուսակը տարանջատվում է երկու սյունակների «Կանխիկ» և «Անկանխիկ» գործառնությունների որտեղ.

«Կանխիկ» սյունակում նշվում է հաշվետու ժամանակահատվածում կաղմակերպության կողմից կանխիկ միջոցներով կատարված գործառնությունների ծավալը և քանակը՝ ըստ համապատասխան տողերի: Այս սյունակի «Վճարումներ» տողում նշվում է կազմակերպության կողմից (դրամարկղից) կանխիկ տրամադրված միջոցների ծավալը և գործառնությունների քանակը: «Ստացումներ» տոդում նշվում են կազմակերպությանը վճարված (դրամարկղ մուտքագրված) միջոցները:

«Անկանխիկ» սյունակում՝ ըստ համապատասխան տողերի նշվում է հաշվետու ժամանակահատվածում կազմակերպության բանկային հաշվով/հաշիվներով կատարված անկանխիկ գործառնությունների ծավալը և քանակը (բացառությամբ դրամարկղի հետ թղթակցող գործառնությունների): Այս սյունակի «Վճարումներ» տողում նշվում է կազմակերպության հաշվից/հաշիվներից ՀՀ տարածքում գործող բանկերին/բանկերի հաճախորդներին կատարված անկանխիկ վճարումների ծավալը և քանակը: Իսկ «Ստացումներ» տողում նշվում են ՀՀ տարածքում գործող բանկերից/բանկերի հաճախորդներից կազմակերպության հաշվին/հաշիվներին ուղղված վճարումները:

«Կազմակերպության ճանապարհային չեկերով գործառնություններ» (') աղյուսակում բոլոր տվյալները բերվում են հաշվետու ժամանակահատվածի համար:

«Կազմակերպության ճանապարհային չեկերի տեսակներ» սյունակում նշվում են կազմակերպության կողմից տրամադրված կամ սպասարկված կազմակերպությանը պատկանող ճանապարհային չեկերի տեսակները:

«Տրամադրում» սյունակում նշվում են կազմակերպության կողմից հաճախորդին տրամադրված կազմակերպության կողմից թողարկված սեփական ճանապարհային չեկերի գումարը և քանակը՝ ըստ չեկի տեսկների:

«Սպասարկում» սյունակում նշվում են հաճախորդի կողմից կազմակերպությանը վճարման ներկայացված կազմակերպության այն ճանապարհային չեկերը (չեկերի գումարը և քանակը), որոնց դիմաց վճարը հաճախորդին կատարվել է հաշվետու ժամանակահատվածում:

«Վարկային (կրեդիտային) քարտերի տրամադրում և սպասարկում» (') աղյուսակում՝

18.1. Հավելված 1-ի Ձև թիվ 21 հաշվետվությունը ներկայացվում է վարկային կազմակերպության կողմից թողարկված բաժնային և/կամ պարտքային արժեթղթի տեղաբաշխումը սկսելու պահից յուրաքանչյուր եռամսյակի ավարտին, ինչպես նաև տեղաբաշխման ավարտից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվության մեջ լրացվում է թողարկման մասին որոշման ամսաթիվը, արժեթղթերի տեղաբաշխման

սկիզբը և ավարտը: Եթե տեղաբաշխումն ավարտված է, ապա որպես ավարտի ամսաթիվ պետք է նշել տեղաբաշխման փաստացի ավարտի ամսաթիվը, հակառակ դեպքում՝ նախատեսվող ավարտի ամսաթիվը:

Հաշվետվությունը բաղկացած է չորս աղյուսակից: Աղյուսակ 1-ում լրացվում են տեղեկություններ վարկային կազմակերպության կողմից թողարկված արժեթղթերի վերաբերյալ՝ թողարկվող արժեթղթերի տեսակը և տարատեսակը (օրինակ՝ սովորական անվանական բաժնետոմս, փոխարկելի անվանական պարտատոմս), թողարկման ընդհանուր ծավալը, թողարկված արժեթղթերի քանակը, անվանական արժեքը, տեղաբաշխված արժեթղթերի քանակը և ընդհանուր ծավալը: Երկրորդ աղյուսակում լրացվում են տեղեկություններ վարկային կազմակերպության թողարկած արժեթղթերի տեղաբաշխմանը մասնակցած կազմակերպությունների վերաբերյալ՝ նրա լրիվ անվանումը, գտնվելու հասցեն, ծառայության համար վճարված միջնորդավճարը: Երրորդ և չորրորդ աղյուսակներում լրացվում են համապատասխանաբար վարկային կազմակերպության խորհրդի և վարչության անդամներին պատկանող ածեթղթերի վերաբերյալ տեղեկություններ:

Հաշվետվությունը չպետք է ներկայացվի վարկային կազմակերպության կողմից թողարկված այն արժեթղթերի համար, որոնք «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն գրանցված են ֆոնդային բորսայում և/կամ Կենտրոնական բանկում:

(18.1 կետը լրաց. 04.11.08թ. թիվ 298Ն)

18.2. Հավելված 1-ի Չև թիվ 22 հաշվետվությունը բաղկացած է երկու մասից: Առաջին մասում լրացվում են տեղեկություններ հաշվետու տարվա ընթացքում վարկային կազմակերպության կողմից թողարկված և տեղաբաշխված բաժնային և/կամ պարտքային արժեթղթերի վերաբերյալ, իսկ երկրորդ մասում՝ վարկային կազմակերպության կողմից այլ անձանց կանոնադրական կապիտալներում կատարված ներդրումների վերաբերյալ: Հաշվետվությունը ներկայացվում է անկախ վարկային կազմակերպության կազմակերպա-իրավական ձևից: Աղյուսակ 2-ը լրացվում է միայն այն դեպքում, եթե վարկային կազմակերպության կողմից թողարկված բաժնային և/կամ պարտքային արժեթղթերը հաշվետու տարվա ընթացքում շրջանառվել են բորսաներում:

Չև թիվ 22 հաշվետվությունը չպետք է ներկայացվի այն վարկային կազմակերպությունների կողմից, որոնք «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, որպես հաշվետու թողարկող, հաշվետվություններ են ներկայացնում Կենտրոնական բանկ:

(18.2 կետը լրաց. 04.11.08թ. թիվ 298Ն)

19. (19-րդ կետը ուժը կորցրել է 04.11.08թ. թիվ 298 Ն որոշմամբ):

19.1. Հավելված 1-ի Չև թիվ 28 հաշվետվությունը լրացնելիս «Վարկային կազմակերպությունների ղեկավարների թվաքանակը» տողում պետք է արտացոլվի «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածով սահմանված ղեկավարների թվաքանակը հաշվետու ժամանակաշրջանի միջին օրական կտրվածքով:

«Վարկային կազմակերպության ոչ ղեկավար աշխատակիցների թվաքանակը» տողում պետք է արտացոլվի «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի գործառնությունների իրականացման, ինչպես նաև վարկային կազմակերպության խնդիրների կատարման հետ ուղղակիորեն առնչվող աշխատակիցների թվաքանակը հաշվետու ժամանակաշրջանի միջին օրական կտրվածքով:

«Այդ թվում՝ սպասարկող անձնակազմի» տողում ներառվում են վարկային կազմակերպության այն աշխատակիցները, ովքեր չեն մասնակցում «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի գործառնությունների իրականացմանը, ինչպես նաև նրանք, ում պարտականությունները ուղղակիորեն չեն առնչվում վարկային կազմակերպության խնդիրների կատարման հետ, օրինակ՝ գործավարները կամ օժանդակ տնտեսության սպասարկման բնագավառում ընդգրկված աշխատակիցները:

Աշխատակիցների միջին օրական թվաքանակը հաշվարկելու համար աշխատողների թվաքանակն ըստ օրերի գումարվում են և բաժանվում օրացուցային օրերի վրա: Ընդ որում, հաշվարկի մեջ ներառվում են որոշակի ժամկետով կնքված միայն այն պայմանագրով աշխատող աշխատողները, որոնց հետ կնքված աշխատանքային պայմանագրի ժամկետը ներառում է տվյալ եռամսյակն ամբողջությամբ:

«Վարկային կազմակերպությունների աշխատակիցների աշխատավարձի ֆոնդ» տողում լրացվում է վարկային կազմակերպության հաշվետու ժամանակաշրջանի միջին ամսական աշխատավարձի ֆոնդը, որի մեջ չեն ներառվում Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամին գործատուի հաշվին կատարվող հատկացումները:

«Վարկային կազմակերպության աշխատակիցներին այլ վճարումներ» տողում լրացվում է վարկային կազմակերպության աշխատակիցներին վճարվող աշխատավարձին հավասարեցված վճարումները՝ պարգևատրումների, հավելավճարների և այլ վճարումների հանրագումարը միջին ամսական կտրվածքով:

«Վարկային կազմակերպությունների աշխատակիցների վերապատրաստումների (վերապատրաստումները ֆինանսաբանկային ոլորտում՝ համապատասխան վկայականի առկայության դեպքում) քանակը» տողում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանում ֆինանսաբանկային ոլորտում վերապատրաստումների քանակը, որոնց մասնակցել են վարկային կազմակերպության աշխատակիցները:

«Վերապատրաստումներին մասնակցած աշխատակիցների քանակը» տողում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանում ֆինանսաբանկային ոլորտում վերապատրաստումների մասնակցած աշխատակիցների քանակը:

«Վարկային կազմակերպությունների աշխատակիցների քանակը, ովքեր ունեն ֆինանսաբանկային համակարգում փորձ» տողը լրացնելիս ֆինանսաբանկային համակարգում աշխատանքային փորձ ունեցող են համարվում այն անձինք, ովքեր աշխատել են «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 6-րդ բաժնով սահմանված, ինչպես նաև «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված գործառնություններ իրականացնող կազմակերպություններում:

«Վարկային կազմակերպության աշխատակիցների քանակը, ովքեր ունեն գիտական աստիճան» տողում լրացվում է բոլոր երկրների ԲՈՀ-երի կողմից սահմանված գիտական աստիճան ունեցող աշխատակիցների քանակը:

Չև թիվ 28 հաշվետվության 8-րդ, 9-րդ և 10-րդ տողերում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի միջին օրական տվյալները:

(19.1 կետը լրաց. 04.11.08թ. թիվ 298Ն)

20. Հավելված 1-ի ձև թիվ 30 հաշվետվությունում ներկայացվում են Կենտրոնական բանկի կողմից հաստատված հիմնական տնտեսական նորմատիվների փաստացի և թույլատրելի մեծությունները: «Փաստացի մեծությունը» սյունակում ամսական հաշվարկվող նորմատիվների համար արտացոլվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին ամսվա նորմատիվի փաստացի մեծությունը, հաշվարկված կանոնակարգ 14-ով սահմանված կարգով: «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը» սյունակում արտացոլվում է Կենտրոնական բանկի կողմից սահմանված նորմատիվների թույլատրելի մեծությունը՝ հաշվարկված կանոնակարգ 14-ով սահմանված կարգով: «Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը» սյունակում արտացոլվում է յուրաքանչյուր նորմատիվի գծով խախտումների քանակը (օրական հաշվարկվող նորմատիվների համար ներառվում են նաև ոչ աշխատանքային օրերը), իսկ եթե խախտում առկա չէ, համապատասխան տողում լրացվում է «խախտում առկա չէ» արտահայտությունը:

(20-րդ կետը փոխ. 04.11.08թ. թիվ 298Ն)

20.1. Հավելված 1-ի Չև թիվ 31 հաշվետվությունում արտացոլվում են վարկային կազմակերպության կողմից ռեզիդենտներից ներգրավված փոխառությունների վերաբերյալ տվյալները՝ յուրաքանչյուր տարվա վերջի դրությամբ՝ ըստ համախառն հաշվեկշռային մնացորդների: Հաշվետվությունում չեն ներառվում բանկերից և վարկային կազմակերպություններից ներգրավված փոխառությունները: Հաշվետվությունում տվյալները լրացվում են հազար դրամներով:

Հաշվետվության «Այդ թվում՝ այն փոխառությունները, որոնց համար նախատեսված է ժամկետից շուտ վերադարձ» սյունակում արտացոլվում են այն փոխառությունները կամ փոխառությունների այն մասը, որոնք ըստ փոխառուի պահանջի կարող են վերադարձվել պայմանագրով նախատեսված ժամկետից շուտ, նույնիսկ եթե գանձվում են տույժեր:

«Փոխառություն տրամադրող սուբյեկտը» սյունակը լրացնելիս անհրաժեշտ է ընտրել հետևյալ տարբերակներից որևէ մեկը՝ «մասնակից ֆիզիկական անձ», «իրավաբանական անձ», «հիմնարկներ», «այլ ֆինանսական կազմակերպություններ», «այլ»:

Հաշվետվության 2-րդ սյունակում լրացվում է փոխառության արժույթի ISO կոդը:

Փոխառությունների տարանջատումն ըստ ժամկետների իրականացվում է համաձայն փոխառությունների պայմանագրերում նշված ժամկետների:

(20.1 կետը լրաց. 04.11.08թ. թիվ 298Ն, փոխ. 21.12.10թ. թիվ 343Ն, փոխ. 29.05.12թ. թիվ 145Ն)

20.2 Սույն կանոնակարգի 2-րդ և 3-րդ կետերում ընդգրկված աղյուսակներում նշված թիվ 32 հաշվետվությունը բաղկացած է 2 աղյուսակներից, որոնք լրացվում են սույն կետով սահմանված կարգով: Հաշվետու վարկային կազմակերպությունները սույն կետով

նախատեսված հաշվետվությունը չեն ներկայացնում ոչ օտարերկրյա ներդրումային ծառայություններ մատուցող անձանց միջոցով կնքված գործարքների և մարման գործարքների համար:

1) Սույն կետով նախատեսված հաշվետվությունում լրացվում են հաշվետվության ներկայացման օրվան նախորդող օրվա ժամը 16:00-ից մինչև հաշվետվության ներկայացման օրվա ժամը 16:00-ը կնքված գործարքների և (կամ) արդեն կնքված գործարքների պայմաններում փոփոխությունների (այսուհետ՝ փոփոխված գործարքներ) վերաբերյալ տեղեկությունները (անկախ տվյալ գործարքի մարման ժամկետից):
2) Սույն հաշվետվության իմաստով գործարքների պայմաններում փոփոխություններ են համարվում սույն հաշվետվության 2-րդ աղյուսակում տվյալ գործարքի վերաբերյալ նախկինում ներկայացված տեղեկությունների փոփոխությունները: Փոփոխված գործարքների վերաբերյալ տեղեկությունները լրացնելիս սույն հաշվետվության 2-րդ աղյուսակում լրացվում է ինչպես բոլոր փոփոխված տեղեկությունները (բացառությամբ ,Գործարքի կնքման ամսաթիվը և ,Գործարքի նույնականացուցիչ համարը սյունակների, որտեղ լրացվում են առաջնային գործարքի համապատասխանաբար ,Գործարքի կնքման ամսաթիվը և ,Գործարքի նույնականացուցիչ համարը, այնպես էլ այն տեղեկությունները, որոնք չեն փոփոխվել:
3) Սույն հաշվետվությունում գործարքները լրացվում են այն արժույթով (Հայաստանի Հանրապետության դրամով, դոլարով և այլն)՝ ամբողջական միավորներով, որով կնքվել են գործարքները, իսկ թվերը ներկայացվում են ստորակետից հետո 5 նիշի ճշտությամբ:
4) Սույն կետով նախատեսված հաշվետվության աղյուսակների սյունակները լրացվում են հետևյալ ընդհանուր կանոններին համապատասխան.

ա. ,Արժեթղթի դասը սյունակում նշվում է ,բաժնայինե կամ ,ոչ բաժնայինե: Արժեթղթերի տարբերակիչ ծածկագրի (թողարկման պետական գրանցման համարի) առկայության դեպքում սույն ենթակետով նախատեսված սյունակը չի լրացվում: Սույն ենթակետով նախատեսված սյունակը օտարերկրյա արժեթղթերի համար պարտադիր լրացման ենթակա է՝ անկախ այն հանգամանքից արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը առկա է, թե ոչ:

բ. ,Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը սյունակում նշվում է ISIN կոդը, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետությունում թողարկված ոչ պետական արժեթղթերի դեպքում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից շնորհված արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը: Պետական արժեթղթերի դեպքում նշվում է դրանց թողարկման պետական գրանցման համարը: Օտարերկրյա արժեթղթերի դեպքում նշվում է օտարերկրյա իրավասու մարմնի կողմից արժեթղթին շնորհված տարբերակիչ ծածկագիրը (հայտնի լինելու դեպքում): Տարբերակիչ ծածկագիր կամ պետական գրանցման համար չունենալու դեպքում նշվում է կարգավորվող շուկայի կողմից արժեթղթին տրված հապավումը (առկայության դեպքում):

գ. ,Թողարկողի ֆիրմային անվանումը գտնվելու վայրը սյունակը լրացվում է արժեթղթի տարբերակիչ ծածկագրի բացակայության դեպքում: Սյունակում նշվում է թողարկողի ֆիրմային անվանումը (ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը), գտնվելու վայրը (բնակության վայր): Սույն ենթակետով նախատեսված սյունակը օտարերկրյա արժեթղթերի համար պարտադիր լրացման ենթակա է՝ անկախ այն հանգամանքից արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը առկա է, թե ոչ:

դ. ,Արժեթղթերի ծավալն՝ անվանական արժեքով սյունակում լրացվում է միայն արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը:

ե. ,Գործարքի արժույթի ISO կոդը սյունակում լրացվում է գործարքով վճարման միջոց հանդիսացող արժույթի կոդը:

զ. ,Արժեթղթի տարեկան եկամտաբերությունը սյունակում լրացվում է ոչ ծավալային արժեթղթերի դեպքում միավոր արժեթղթի գնի, իսկ ծավալային արժեթղթերի դեպքում գործարքի ընդհանուր գումարի հիման վրա հաշվարկված տարեկան եկամտաբերությունը՝ հաշվարկված թողարկողի կողմից տվյալ արժեթղթի թողարկման և(կամ) տեղաբաշխման պայմաններով սահմանված բանաձևով: Սույն ենթակետով նախատեսված սյունակը չի լրացվում այն արժեթղթերի համար, որոնց համար նախատեսված չէ եկամտաբերության հաշվարկ (մասնավորապես՝ հասարակ բաժնետոմսերի, բաժնեմասերի, ներդրումային ֆոնդերի փայերի կամ դրանցում մասնակիցների բաժնեմասը հավաստող նման այլ արժեթղթերի համար և այլն): Ընդ որում, տարեկան եկամտաբերությունը հաշվարկվում է գործարքի կնքման (գործարքի պայմանների փոփոխության) օրվա դրությամբ:

է. ,Գործարքի կնքման ամսաթիվը սյունակում լրացվում է առաջնային գործարքի կնքման ամսաթիվը:

ը. ,Գործարքի մյուս կողմը սյունակում լրացվում է գործարքի մյուս կողմ հանդիսացող սուբյեկտին Կենտրոնական բանկի կողմից շնորհված կոդը, դրա բացակայության դեպքում նշվում է այդ կողմի ռեզիդենտությունը՝ կատարելով ,ռեզիդենտ կամ ,ոչ ռեզիդենտ նշումը: Ընդ որում, եթե գործարքի մյուս կողմ հանդիսացող ներդրումային ծառայություններ մատուցող անձը գործարքը կնքել է հաճախորդի հաշվին, ապա գործարքի մյուս կողմ է համարվում ոչ թե տվյալ հաճախորդը, այլ այդ հաճախորդի հաշվին գործարք կնքող ներդրումային ծառայություններ մատուցող անձը:

թ. ,Միջնորդը սյունակը լրացման ենթակա է միայն օտարերկրյա ներդրումային ծառայություններ մատուցող անձի միջոցով օտարերկրյա կազմակերպված շուկայում կամ օտարերկրյա անձի հետ գործարքներ կնքելու դեպքում, որտեղ լրացվում է միջնորդ հանդիսացող ներդրումային ծառայություններ մատուցող անձի անվանումը:

5) Ի լրումն սույն կետով սահմանված լրացման կանոնների՝ սույն կետով նախատեսված հաշվետվության յուրաքանչյուր աղյուսակի համար նախատեսվում են լրացման լրացուցիչ կանոններ:

4) **,Հաշվետու անձի կողմից կնքված արժեթղթերի առքուվաճառքի գործարքների վերաբերյալ** 1-ին աղյուսակում լրացվում են հաշվետու անձանց

կողմից արժեթղթերի առքի ու վաճառքի գործարքների կնքման վերաբերյալ տեղեկությունները՝ համաձայն լրացման հետևյալ կանոնների.

ա. ,Գործարքի տեսակը (առք/վաճառք)ե սյունակում լրացվում է ,առքե կամ ,վաճառքե՝ կախված հաշվետու անձի տեսանկյունից գործարքը առք է, թե՝ վաճառք:

բ. ,Քանակըե սյունակում լրացվում է գնվող կամ վաճառվող արժեթղթերի քանակը՝ հատերով, ընդ որում՝ ծավալային արժեթղթերի համար սույն ենթակետով նախատեսված սյունակը չի լրացվում:

գ. ,Միավոր արժեթղթի գինըե սյունակում լրացվում է մեկ արժեթղթի առքի (վաճառքի) գինը: Ծավալային արժեթղթերի համար սույն ենթակետով նախատեսված սյունակը չի լրացվում:

ե. ,Ընդհանուր գումարըե հաշվարկվում է որպես միավոր գնի և քանակի արտադրյալ: Ծավալային արժեթղթերի դեպքում լրացվում է ծավալային արժեթղթերով կնքված գործարքի ընդհանուր գինը:

6) ,Հաշվետու անձի կողմից կնքված ռեպո (հակադարձ ռեպո) գործարքների վերաբերյալե 2-րդ աղյուսակում լրացվում են հաշվետու անձի կողմից կնքված և (կամ) փոփոխված ռեպո (հակադարձ ռեպո) գործարքների վերաբերյալ տեղեկությունները՝ համաձայն լրացման հետևյալ կանոնների.

ա. ,Գործարքի նույնականացուցիչ համարըե սյունակում նշվում է հաշվետու անձի կողմից վարվող գործարքների ներքին գրանցամատյաններում տվյալ գործարքին տրված նույնականացուցիչ համարը, որը պետք է լինի առանձնահատուկ (չկրկնվող) յուրաքանչյուր գործարքի համար:

բ. ,Գործարքի տեսակը (ռեպո/ հակադարձ ռեպո)ե սյունակում նշվում է՝ հաշվետու անձի տեսանկյունից գործարքը ռեպո է, թե հակադարձ ռեպո: Արժեթղթերի վաճառքի գործարքը՝ հետգնման պայմանով, ներկայացվում է որպես ,ռեպոե գործարք, իսկ արժեթղթերի առքի գործարքը՝ հետ վաճառելու պայմանով, լրացվում է որպես ,հակադարձ ռեպոե գործարք:

դ. ,Գործարքի բնույթըե սյունակում նշվում է ,նոր կնքվածե, ,երկարաձգվածե, ,կրճատվածե կամ ,այլե տարբերակներից մեկը: Ընդ որում, նոր գործարք կնքվելու դեպքում նշվում է ,նոր կնքվածե տարբերակը, արդեն կնքված գործարքների գործողության ժամկետի կրճատման դեպքում (անկախ այն հանգամանքից այլ պայմաններ փոխվել են, թե ոչ)՝ ,կրճատվածե տարբերակը, երկարաձգման դեպքում (անկախ այն հանգամանքից այլ պայմաններ փոխվել են, թե ոչ)՝ ,երկարաձգվածե տարբերակը, իսկ արդեն կնքված գործարքների այլ պայմանների փոփոխության դեպքում, որոնց դեպքում գործարքի գործողության ժամկետի փոփոխություն տեղի չի ունեցել, նշվում է ,այլե տարբերակը:

ե. ,Քանակըե սյունակում լրացվում է ռեպո (հակադարձ ռեպո) գործարքի հիմքում ընկած արժեթղթի քանակը: Ընդ որում՝ ծավալային արժեթղթերով ռեպո (հակադարձ

ռեպո) գործարքների կնքման դեպքում սույն ենթակետով նախատեսված սյունակը չի լրացվում:

զ. ,Ընդհանուր գումարը՝ սյունակում լրացվում է ռեպո (հակադարձ ռեպո) գործարքի առաջնային առքի (վաճառքի) ընդհանուր արժեքը:

է. ,Տարեկան ռեպո (հակադարձ ռեպո) տոկոսադրույքը՝ սյունակում լրացվում է յուրաքանչյուր ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքի տարեկան (տարին՝ 365 կամ 366 օր) տոկոսադրույքը: Այն դեպքում, երբ տոկոսադրույք վճարողը արժեթղթերի գնորդն է, տոկոսադրույքը լրացվում է բացասական նշանով:

ը. ,Փոփոխված գործարքի ամսաթիվը՝ սյունակը լրացվում է միայն փոփոխված գործարքների լրացման դեպքում, որտեղ լրացվում է նախկինում կնքված գործարքի պայմաններում փոփոխություն իրականացնելու մասին ցանկացած ձևով համաձայնություն ձեռքբերելու ամսաթիվը՝ անկախ այդ համաձայնության ուժի մեջ մտնելու ժամկետից:

(20.2 կետը լրաց. 02.06.09թ. թիվ 158Ն, խմբ. 06.11.12թ. թիվ 296Ն)

(20.3 կետը լրաց. 08.09.09թ. թիվ 268Ն, փոխ. 21.12.10թ. թիվ 343Ն, ուժը կորցրել է 29.05.12թ. թիվ 145Ն)

20.4. Սույն կանոնակարգի 2-րդ և 3-րդ կետերում նշված՝ Կանոնակարգ 3-ով սահմանված թիվ 3 և թիվ 7 հաշվետվությունները լրացվում են Կանոնակարգ 3-ով սահմանված կարգով:

(20.4 կետը լրաց. 06.12.11թ. թիվ 332Ն)

ԳԼՈՒԽ IV. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

21. Հաշվետվությունները Կենտրոնական բանկի վիճակագրության վարչության հաշվետվությունների ընդունման և ամփոփման համար պատասխանատու բաժին են ներկայացվում Կենտրոնական բանկի կողմից սահմանված ժամկետներում: Եթե հաշվետվության ներկայացման օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա հաշվետվությունը ներկայացվում է այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Եթե ներկայացվող տվյալները հաշվետու ժամանակաշրջանում փոփոխություն չեն կրել, կամ եթե հաշվետվությանն առնչվող գործարքներ չեն իրականացվել, ապա վարկային կազմակերպությունը ներկայացնում է գրություն՝ նշելով չներկայացվող ձևերը:

(21-րդ կետը փոխ. 21.11.06թ. թիվ 691Ն, խմբ. 26.02.08թ. թիվ 51Ն)

22. Հաշվետվությունը համարվում է ներկայացված և ընդունված, եթե հաշվետվությունների էլեկտրոնային տարբերակները չունեն ծրագրային կամ տեխնիկական թերություն: Գլուխ 5-ով սահմանված ժամկետներից հետո ներկայացվող ճշգրտված հաշվետվությունները ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով՝ զուգահեռաբար հաշվետվությունների փոփոխման (ճշգրտման) վերաբերյալ գրավոր

տեղեկացնելով Կենտրոնական բանկի նախագահին: Ճշգրտված հաշվետվության էլեկտրոնային տարբերակի և գրավոր տեղեկանքի առկայության դեպքում միայն փոփոխված հաշվետվությունները կհամարվեն Կենտրոնական բանկ ներկայացված:

23. Կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանման՝ տվյալ վարկային կազմակերպության համապատասխան վերահսկողը հաշվետվությունների պարզաբանման և մեկնաբանման կարիք ունեցող կետերի վերաբերյալ, ինչպես նաև առանձին վերլուծական նպատակներից ելնելով, ծանուցման միջոցով վարկային կազմակերպություններից կարող է պահանջել լրացուցիչ տեղեկություններ և պարզաբանումներ:

Վարկային կազմակերպությունը պարտավոր է ծանուցումը ստանալուց հետո ոչ ուշ, քան մեկ օրվա ընթացքում (եթե ծանուցման մեջ այլ ժամկետ նշված չէ), միջոցներ ձեռնարկել՝ ծանուցմամբ պահանջվող պարզաբանումները և (կամ) այլ տեղեկություններն ապահովելու համար:

Հաշվի առնելով վարկային կազմակերպության գտնվելու վայրը՝ վարկային կազմակերպությանը ծանուցումը կարող է տրվել հեռախոսի (հեռախոսագրի), «Սի Բի էյ նեթ» ցանցի էլեկտրոնային փոստի կամ կապի սահմանված այլ պահուստային միջոցներով:

Ծանուցման միջոցով վարկային կազմակերպության լիազոր ներկայացուցիչը կարող է հրավիրվել ֆինանսական վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանում՝ հաշվետվությունների վերաբերյալ պարզաբանումներ ու մեկնաբանումներ տալու համար:

Ծանուցումը ստորագրվում է Կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կամ ղեկավարի տեղակալի և վարկային կազմակերպությունների վերահսկողության համար պատասխանատու կոնկրետ ստորաբաժանման ղեկավարի կողմից:

(23-րդ կետը փոխ. 04.11.08թ. թիվ 298Ն)

ԳԼՈՒԽ V. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

24. Շաբաթական հաշվետվությունները ներկայացվում են մինչև հաշվետու շաբաթվան հաջորդող 2-րդ աշխատանքային օրը ներառյալ:

25. Ամսական և եռամսյակային հաշվետվությունների ներկայացման ժամկետը վարկային կազմակերպության մասնաճյուղերի քանակից ելնելով՝ սահմանվում է.

1) մասնաճյուղեր չունեցող կամ մինչև 15 (ներառյալ) մասնաճյուղ ունեցող վարկային կազմակերպությունների համար՝ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 4-րդ աշխատանքային (բանկային) օրը (ներառյալ).

2) 16 և ավելի մասնաճյուղ ունեցող վարկային կազմակերպությունների համար՝ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 7-րդ աշխատանքային (բանկային) օրը (ներառյալ):

(25-րդ կետը խմբ. 29.05.07թ. թիվ 154Ն)

26. Տարեկան հաշվետվությունների ներկայացման ժամկետը սահմանվում է՝

1) մասնաճյուղեր չունեցող կամ մինչև 15 (ներառյալ) մասնաճյուղ ունեցող վարկային կազմակերպությունների համար՝ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա հունվարի 20-ը.

2) 16 և ավելի մասնաճյուղ ունեցող վարկային կազմակերպությունների համար՝ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա հունվարի 30-ը:

3) (3-րդ ենթակետը ուժը կորցրել է 29.05.12թ. թիվ 145Ն)

(26-րդ կետը խմբ. 29.05.07թ. թիվ 154Ն)

27. Հավելված 1-ի ձև թիվ 10 հաշվետվությունը փաստացի համալրված կանոնադրական կապիտալի մեծության կամ կառուցվածքի փոփոխության դեպքում ներկայացվում է փոփոխությունը կատարվելուց հետո մինչև 7-րդ աշխատանքային օրը ներառյալ:

28. Հավելված 1-ի ձև թիվ 13 հաշվետվությունը ներկայացնում են միայն կանխիկ գործառնություններ իրականացնելու լիցենզիա ունեցող վարկային կազմակերպությունները:

29. Հավելված 1-ի ձև թիվ 21 հաշվետվությունը ներկայացվում է արժեթղթերի թողարկման ավարտից հետո մինչև 7-րդ աշխատանքային օրը ներառյալ:

30. (30-րդ կետը ուժը կորցրել է 21.12.10թ. թիվ 343 Ն որոշմամբ):

31. Հաշվետվություն արտարժույթի առք և վաճառքի գործառնությունների վերաբերյալ» թիվ 19 (օրական) հաշվետվությունը, անկախ իրականացված գործարքի ծավալի մեծությունից, ներկայացվում է Կենտրոնական բանկի վիճակագրության վարչության հաշվետվությունների ընդունման և ամփոփման համար պատասխանատու բաժին՝ յուրաքանչյուր օր, մինչև ժամը 15:00-ը (հաշվետվությունը պետք է ներկայացնել Սի Բի էյ Նեթ համակարգի միջոցով, իսկ Սի Բի էյ Նեթ համակարգի խափանման դեպքում՝ էլեկտրոնային փոստով կամ էլեկտրոնային կրիչների միջոցով):

(31-րդ կետը խմբ. 21.11.06թ. թիվ 691Ն, փոխ. 26.02.08թ. թիվ 51Ն)

31.1. Թիվ 32 հաշվետվությունը ներկայացվում է յուրաքանչյուր օր մինչև ժամը $17^{\underline{00}}$:

Սույն կետում նշված ժամկետում Կենտրոնական բանկի համապատասխան ստորաբաժանում հաշվետվություն չներկայացնելը հանդիսանում է հայտարարություն առ այն, որ տվյալ հաշվետու ժամանակահատվածում հաշվետու անձը սույն կետի համաձայն թիվ 32 հաշվետվությունով ներկայացվող գործառնություններ չի իրականացրել:

(31.1 կետը լրաց. 02.06.09թ. թիվ 158Ն, փոխ. 06.11.12թ. թիվ 296 Ն)

31.2. Սույն կանոնակարգի 2-րդ և 3-րդ կետերում նշված թիվ 3 և թիվ 7 հաշվետվությունները ներկայացվում են՝ համապատասխանաբար ամսեկան և շաբաթական կտրվածքով՝ ամսեկան և շաբաթական հաշվետվությունների համար սույն կանոնակարգով սահմանված ժամկետներում: Ընդ որում, սույն կետում նշված հաշվետվությունները վարկային կազմակերպությունները ներկայացնում են սկսած Կենտրոնական բանկի կողմից գործունեության տեսակի փոփոխման նախնական համաձայնությունը ստանալուց հետո՝ որպես բանկ գրանցվելու և բանկային գործունեության լիցենզիան ստանալու նպատակով Կենտրոնական բանկ դիմելու ամսվան նախորդող 6-րդ ամսվա 1-ից մինչև վարկային կազմակերպության՝ որպես բանկ գրանցվելու և բանկային գործունեության լիցենզիա ստանալու դիմումը Կենտրոնական բանկի կողմից մերժվելու կամ բավարարելու օրը:

(31.2 կետը լրաց. 06.12.11թ. թիվ 332Ն)

ԳԼՈՒԽ VI. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ (32-38 կետեր)

(Գլուխ VI-ը ուժը կորցրել է 02.06.09թ. թիվ 166Ն)

Չև թիվ 12-ը ուժը կորցրել է 08.11.08թ. թիվ 298Նորոշմամբ:

Ձև թիվ 18.1

Ուղղակի ներդրողներ և նույն խմբի մեջ մտնող սուբյեկտներ

1. Ուղղակի ներդրումներ են համարվում ոչ ռեզիդենտի կողմից ընկերության բաժնետիրական կապիտալում կատարված ներդրումները կամ ձեռք բերված փայամասնակցությունը, եթե նրանք ապահովում են ձայնի իրավունք տվող բաժնեմասի 10%-ը և ավելին: Որպես ուղղակի ներդրումներ են դիտարկվում ոչ միայն ուղղակի ներդրողի կողմից կատարված ձեռնարկության կապիտալում մասնակցության ձևով ներդրումները, այլ նաև ուղղակի ներդրմամբ ձեռնարկության հետ նրա կողմից իրականացված ցանկացած այլ գործառնությունները: Որպես վերջինիս օրինակ կարող են ծառայել ուղղակի ներդրողի կողմից ուղղակի ներդրմամբ ձեռնարկությանը տրամադրվող վարկերը: Այդ պատճառով հաշվետվությունում տվյալներ են հավաքագրվում ոչ միայն բուն ուղղակի ներդրման գումարի վերաբերյալ, այլ նաև երկու ձեռնարկությունների միջև տեղի ունեցող բոլոր գործառնությունների մասով՝ ըստ գործիքների դասակարգմամբ:

2. Բացի ուղղակի ներդրող-ուղղակի ներդրումով ձեռնարկություն փոխհարաբերություններից երկու ձեռնարկությունների միջև կարող են լինել ,միջնորդավորվածե ներդրումային հարաբերություններ, թեև նրանց միջև բուն ներդրումներ կապիտալում իրականացված չեն: Այդպիսի օրինակ կարող են լինել նույն մայր ընկերության՝ տարբեր երկրներում գտնվող երկու ուղղակի ներդրումներով ձեռնարկությունները միմյանց նկատմամբ: Թեև նրանց միջև գոյություն չունեն

ներդրումային հարաբերություններ, յս ընկերությունները դիտարկվում են որպես ,նույն խմբի մեջ մտնողե սուբյեկտներ: Հնարավոր է մեկ այլ տարբերակ, երբ մի երկրի ռեզիդենտ լինելով որևէ ընկերության սեփականատեր՝ ավանդ է ներդնում մեկ այլ երկրում տեղակայված վերոնշյալ ընկերության ուղղակի ներդրումով ձեռնարկությունում (դուստր բանկում): Այս դեպքում ևս դուստր ձեռնարկությունը պետք է ,նույն խմբի մեջ մտնողե սուբյեկտներին վերաբերող աղյուսակում պարտավորությունների մասում արտացոլի ներգրված ավանդը՝ նշելով ավանդատուի վերաբերյալ տեղեկատվությունը: Նման հարաբերություններ կարող են առաջանալ նաև երբ ռեզիդենտ ներդրողը ունի նաև դուստր ձեռնարկություն արտերկրում: Օրինակ, երբ ընկերությունը ունի ռեզիդենտ սեփականատեր, որն իր հերթին ուղղակի ներդրող է հանդիսանում մեկ այլ ոչ ռեզիդենտ ընկերությունում, ապա հարցվող ընկերության և վերոնշյալ ընկերության միջև ցանկացած ակտիվային կամ պասիվային գործառնություն պետք է նույնպես արտացոլվի նույն խմբի մեջ սուբյեկտներին վերաբերող աղյուսակում:

3. Ուղղակի ներդրման հարաբերությունները իրենց մեջ ներառում են երկու կարգի հարաբերություններ՝ 10-50 % բաժնեմասի տնօրինում (նշանակալի մասնակցություն, որին կանվանենք *կապված ընկերություն*- associate) և 50 %-ից ավել բաժնեմասի տնօրինում (որոշիչ մասնակցություն, որին կանվանենք *դուստր ընկերություն- subsidiary*): Ըստ այս հարաբերությունների շարունակվում և դադարում է ուղղակի ներդրումների շղթան: Քանի որ ուղղակի ներդրումները ենթադրում են կառավարման մեջ կայուն ազդեցություն, ապա նման ազդեցությունը շղթայի մեջ պահպանվում է հետևյալ կանոնների պահպանման դեպքում:

1) Որոշիչ մասնակցության միջոցով շղթան շարունակվում է անընդհատ, այսինքն միմյանց հետ որոշիչ կապերի միջոցով կապված բոլոր սուբյեկտները հանդիսանում են նույն խմբի մեջ մտնող
2) Որոշիչ մասնակցությունից նշանակալիի անցնելիս կապը ներառում է միայն առաջին նշանակալի մասնակցության սուբյեկտին, այդ սուբյեկտի որոշիչ վերահսկողության տակ գտնվող սուբյեկտներին, և ընդհատվում է (չի ներառում) հաջորդ նշանակալի սուբյեկտներին անցնելիս: Առաջին նշանակալի մասնակցությամբ ընկերությունը դեռևս կապված է կառավարման կայուն ազդեցությամբ շղթայի վերևի և հորիզոնական մասնակիցների հետ, նրա որոշիչ մասնակցությամբ ընկերությունները նույնպես կապված են, քանի որ դրանք կարելի է դիտարկել որպես առաջին նշանակալի մասնակցությամբ

ընկերության մասնաճյուղ: Սակայն հաջորդ նշանակալի մասնակցությամբ ընկերության մեջ խմբի վերևի օղակները չունեն էական ազդեցություն:



4. Սույն հաշվետվության սկզբունքների առավել ընդգրկուն սխեմատիկ պատկերը ներկայացված է հաջորդ նկարում.

Ձև թիվ 18.1-ը լրացվել է 29.05.08թ. թիվ 145Ն որոշմամբ


Ա
Անմիջական ուղղակի ներդրող Բ և Է-ում; Անուղղակի ուղղակի ներդրող Գ-ում (Ա-ի դուստր) և Դ, Ե, Ը և Ժ (հանռհսանում են Ա-ի հետ
5%
Բ
Ա-ի անմիջական դուստր
Անմիջական ուղղակի ներդրող Գ-ում և Դ-ում; Անուղղակի ուղղակի ներդրող Ե-ում;
Նույն խմբի մեջ Է-ի, Ը-ի և Ժ-ի հետ
100%
40%
Է
Ա-ի հետ կապված
Ուղղակի ներդրող է Ը և Թ-ում
Անուղղակի ուղղակի ներդրող է Ժ-ում և Ի-ում
Նույն խմբի մեջ է Բ, Գ, Դ և Ե-ի
100%
30%
100%
20%
Գ
Բ-ի անմիջական դուստր
Նաև Ա-ի դուստր
Նույն խմբի մեջ է մտնում Դ-ի, Ե-ի, Է-ի, Ը-ի և Ժ-ի հետ
Դ
Բ-ի և Ա-ի հետ կապված
Ուղղակի ներդրող Ե-ում և Զ-ում
Նույն խմբի մեջ է Գ-ի, Է-ի,
Ը
Ուղղակի ներդրող է Ժ-ում և Ի-ում
Է-ի դուստր
Կապված է Ա-ի հետ
Թ
Է-ի հետ կապված
Նույն խմբի մեջ է մտնում Ը, Ժ և Ի-ի հետ
Կապ չունի Ա, Բ, Գ, Դ, Ե և
100%
25%
100%
35%
Ե
Դ-ի դուստր
Կապված Ա-ի և Բ-ի հետ
Նույն խմբի մեջ Գ-ի, Զ-ի, Է-ի, Ը-ի և Ժ-ի հետ
Զ
Դ-ի հետ կապված
Նույն խմբի մեջ է Ե-ի հետ
Կապ չունի Ա, Բ, Գ, Է, Ը, Թ, Ժ և Ի
Ժ
Ը-ի և Է-ի դուստր
Կապված է Ա-ի հետ
Նույն խմբի մեջ է Բ, Գ, Դ, Ե, Թ և Ի
Ի
Կապված է Ը-ի և Է-ի հետ
նույն խմբի մեջ է Ժ-ի և Թ-ի հետ
Կապ չունի Ա, Բ, Գ, Դ, Ե և

Ելնելով վերոշարադրյալ գծապատկերից մի քանի ավելի պարզ և կոնկրետ օրինակների միջոցով ներկայացնենք այն դեպքերը, երբ երկու հաստատություններ դասակարգվում են որպես «մի խմբի անդամ» և նրանց միջև գործառնությունները ներկայացվում են առանձին: Աստղանիշով (*) կառանձնացվի այն ընկերությունը, որի տեսանկյունից լրացվում է սույն հարցաթերթիկը:

Դեպք 1



Ա, Բ և Գ ձեռնարկությունները գործում են տարբեր տնտեսություններում: Այս դեպքում, Ա մայր ձեռնարկությունը ուղղակի ներդրումներ ունի և Բ և Գ ձեռնարկություններում: Ու թեև Բ և Գ ձեռնարկությունների միջև անմիջական ներդրումային հարաբերություններ գոյություն չունեն, նրանց միջև իրականացված ցանկացած գործառնություն ցույց է տրվում որպես նույն խմբի անդամների միջև գործառնություն:

Դեպք 2



Տվյալ դեպքում Գ ձեռնարկությունը որպես նույն խմբի մեջ մտնող ընկերություն չի բացահայտում Ա ընկերությանը, քանի որ Բ ընկերության ներդրումը Գ-ում արդեն իսկ չի հանդիսանում ուղղակի ներդրում:

Դեպք 3



Ա, Բ և Գ ձեռնարկությունները գործում են տարբեր տնտեսություններում: Չնայած որ, Ա ընկերությունը Գ ընկերության բաժնետոմսերի ընդամենը 8%-ին է տնօրինում, այնուամենայնիվ լինելով Բ ընկերության ուղղակի ներդրող և քանի որ Բ ընկերությունը Գ-

ում ունի ուղղակի ներդրում, ստացվում է, որ Ա ընկերությունը, միջնորդավորված Բ-ով, Գ-ում նույնպես ունի ուղղակի ներդրում: Այսպիսով, Գ ձեռնարկությունը որպես ուղղակի ներդրող պետք է արտացոլի Բ ընկերությանը, իսկ որպես նույն խմբի մեջ մտնող ձեռնարկություն նաև Ա ընկերության նկատմամբ պարտավորությունները և նրանց միջև տեղի ունեցող ցանկացած այլ ֆինանսական գործառնությունները:

Դեպք 4



Հնարավոր է, որ ուղղակի ներդրողը ունենա ազդեցության շղթա, որի մեջ մի կապը հանդիսանում է ռեզիդենտ-ռեզիդենտ հարաբերություն: Այսպիսի ռեզիդենտ-ռեզիդենտ հարաբերությունները, որոնք նկարագրված են Դեպք 4-ում Բ և Գ ընկերությունների միջև, չեն խոչընդոտում տարբեր տնտեսություններում ռեզիդենտ հանդիսացող ընկերությունների միջև ուղղակի ներդրումով հարաբերությունների առկայությանը, ինչպիսիք են Ա և Գ ընկերությունները: Այսպիսով, Դեպք 4-ում թեև Ա-ն ուղղակի ներդրումային հարաբերություններ չունի Գ ընկերության հետ, նրանց միջև փաստացի գոյություն ունեն ներդրումային հարաբերություններ՝ միջնորդավորված Բ ընկերությամբ և այդ պատճառով Գ ընկերությունը պետք է ներկայացնի Ա-ի հետ իր բոլոր գործառնությունները նույն խմբի մեջ մտնող սուբյեկտին վերաբերող մասում: Դեպքը կարող է էլ ավելի բարդանալ, եթե Գ-ն գործառնություններ է իրականացնում Դ-ի հետ, որը նույնպես հանդիսանում է Ա-ի դուստր ձեռնարկություն: Եթե Գ ընկերությունը հնարավորություն ունենա բացահայտել նաև

այսպիսի հարաբերությունները, ապա Գ և Դ-ի միջև գործառնությունները նույնպես պետք է ներկայացնել հարցաթերթիկի՝ նույն խմբի անդամներին վերաբերող մասում:

Դեպք 5



Բ և Գ ընկերությունները հանդիսանում են միևնույն տնտեսության ռեզիդենտներ, հետևաբար նրանց միջև հարաբերությունները չեն ընդգրկվում հարցման շրջանակներում: Սակայն Բ ընկերությունը ուղղակի ներդրում ունի նաև ոչ ռեզիդենտ Ա ընկերությունում: Այս դեպքում Գ ընկերությունը իր և Ա ընկերության միջև բոլոր գործառնությունները, թե ակտիվային և թե պասիվային պետք է ներառվեն նույն խմբի մեջ մտնող սուբյեկտների վերաբերյալ աղյուսակում: Միևնույն ժամանակ, եթե ենթադրենք, որ Ա ընկերությունը տիրապետում է նաև մեկ այլ ընկերության կանոնադրական կապիտալին, մեր դեպքում դա Դ ընկերությունն է, ապա Գ-ն պետք է, այսպիսի հարաբերությունների բացահայտման դեպքում, տեղեկատվություն ներկայացնի նաև իր և Դ ընկերություն միջև տեղի ունեցող գործառնությունների վերաբերյալ:

Դեպք 6



Դեպք 6-ը նկարագրում է ուղղակի ներդրումային կապերի բացահայտման համար միևնույն տնտեսության սահմաններում առկա կապերի կարևորությունը: Այս դեպքում բացատրված են ընդհանուր սկզբունքներ, այդ պատճառով հարցման մասնակից կարող դիտարկվել նշված ընկերություններից ցանկացածը: Լինելով ռեզիդենտ-ռեզիդենտ հարաբերություններ Բ և Գ, ինչպես նաև Դ և Ե ընկերությունների միջև առկա ներդրումային հարաբերությունները որոշիչ դեր են խաղում Ա և Բ, ինչպես նաև Ա և Ե ընկերությունների միջև ուղղակի ներդրումների առկայության որոշման և չափերի գնահատման համար: Այսպես, Ա և Բ, Դ և Բ, Դ և Ա ընկերությունները հանդիսանում են նույն խմբի մեջ մտնող: Միևնույն ժամանակ նշենք, որ Ա և Ե, ինչպես նաև Բ և Ե ընկերությունների միջև գոյություն <u>չունեն</u> ներդրումային հարաբերություններ, որոնք ունեն առանձին արտացոլման կարիք, քանի որ ուղղակի ներդրումների կապը կտրվում է Գ և Ե ընկերության միջև:

Ձև թիվ 18.2

Միջազգային ֆինանսական կազմակերպություններ

1. Միջազգային կազմակերպությունները բաժանվում են երկու մասի.
   1) միջազգային ոչ պետական կազմակերպություններ,
   2) միջպետական միջազգային կազմակերպություններ:

2. Միջազգային ոչ պետական կազմակերպությունները (international non-governmental organizations) իրենց հերթին կարող են լինել շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություններ (օրինակ World Organization of the Scout Movement, International Committee of the Red Cross և այլն), ինչպես նաև միջազգային ընկերություններ/կորպորացիաներ, որոնք զբաղվում են շուկայական գործունեությամբ տարբեր երկրներում, օրինակ, Coca-Cola, Toyota կամ HSBC Group, որոնց հաճախ անվանում են նաև վերազգային կորպորացիաներ (multinational corporations): Այս կազմակերպությունները պետք է դիտարկվեն որպես միջազգային գործունեություն ծավալող առևտրային կամ հասարակական կազմակերպություններ, որոնց դասակարգումը պետք է իրականացվի ըստ «Դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի» հատվածավորման սկզբունքների:

3. Միջազգային կազմակերպությունների մյուս տեսակի՝ միջպետական միջազգային կազմակերպությունների բնորոշման համար էլ առավելապես օգտագործվում է «միջազգային կազմակերպություն» տերմինը: Հենց այս իմաստով էլ այն օգտագործվում է պարզաբանման ընթացքում:

4. Միջազգային կազմակերպությունն իրենից ներկայացնում է անդամ երկրների իշխանությունների և/կամ այլ միջազգային կազմակերպությունների ղեկավարությունների միջև կնքված պաշտոնական համաձայնագրի հիման վրա գործող կազմակերպություն: Վերջինիս գոյությունը ճանաչվում է անդամ երկրների օրենսդրությամբ, և նշված պաշտոնական համաձայնագիրը հանդիսանում է միջազգային կազմակերպության կանոնադրությունը: Այն իրենից ներկայացնում է միջազգային իրավաբանական անձ և ենթակա է կարգավորման միջազգային օրենսդրությամբ:

5. Միջազգային կազմակերպություններն իրենց հերթին բաժանվում են երկու մասի.

1) **Միջազգային ֆինանսական կազմակերպություններ,** որոնք իրականացնում են ֆինանսական միջնորդություն միջազգային մակարդակով, այսինքն

իրականացնում են միջոցների վերաբաշխում տարբեր տնտեսությունների վարկատուների և վարկառուների միջև: Մի խումբ երկրների կենտրոնական բանկեր (ներառյալ արժութային միության կենտրոնական բանկը) միջազգային ֆինանսական կազմակերպության օրինակ է: Այլ օրինակներ են հանդիսանում Արժույթի միջազգային հիմնադրամը, Համաշխարհային բանկի խմբի անդամ կազմակերպությունները, Ասիական զարգացման բանկը և այլն:

2) **Այլ միջազգային կազմակերպություններ,** որոնք տրամադրում են ոչ շուկայական բնույթի հասարակական ծառայություններ անդամ երկրներին, օրինակ խաղաղապահության, կրթության, գիտության, տարատեսակ հետազոտությունների ոլորտներում (օրինակ՝ Միավորված ազգերի կազմակերպություն):

6. Միջազգային ֆինանսական կազմակերպությունները կարող են լինել տարածաշրջանային (օրինակ՝ Զարգացման և վերակառուցման եվրոպական բանկ) կամ համաշխարհային (օրինակ՝ Միջազգային ֆինանսական կորպորացիան): Միջազգային կազմակերպությունները որևէ երկրի ռեզիդենտ չեն համարվում: Դրանք ոչ ռեզիդենտ են համարվում նաև այն երկրներում, որտեղ դրանք տեղակայված են, քանի որ չեն կարգավորվում կամ միայն մասամբ են կարգավորվում տվյալ երկրի օրենսդրությամբ: Ի հակադրություն միջազգային կազմակերպությանը՝ երկու և ավելի երկրների կառավարությունների սեփականության տակ գտնվող առևտրային ընկերությունը չի հանդիսանում միջազգային կազմակերպություն: Միջազգային կազմակերպություն չի համարվում նաև միջազգային ֆինանսական ծառայություններ կամ օժանդակություն մատուցող կազմակերպությունը, որի միակ կամ հիմնական բաժնետեր է հանդիսանում մեկ երկրի կառավարությունը (օրինակ՝ kfW):

7. Կից ներկայացվում է նաև առավել հայտնի միջազգային ֆինանսական կազմակերպությունների ցանկը: Միևնույն ժամանակ տեղեկացնում ենք. ըր ցանկն ամբողջական չէ, և այլ միջազգային ֆինանսական կազմակերպությունների դասակարգումը պետք է իրականացվի վերը նշված չափանիշների հիման վրա:

1) African Development Bank
2) Asian Development Bank (ADB)
3) Bank for International Settlements (BIS)
4) Black Sea Trade and Development Bank (BSTDB)
5) Caribbean Development Bank (CDB)
6) Central American Bank for Economic Integration (CABEI)
7) Corporacion Andina de Fomento (CAF)
8) East African Development Bank (EADB)
9) Eurasian Development Bank (EDB)
10) European Bank for Reconstruction and Development (EBRD)

11) European Commission (EC)
12) European Central Bank (ECB)
13) European Fund for Southeast Europe (EFSE)
14) European Investment Bank (EIB)
15) Inter-American Development Bank (IDB)
16) International Fund for Agricultural Development (IFAD)
17) International Monetary Fund (IMF)
18) Islamic Development Bank (IDB)
19) Nordic Development Fund (NDF)
20) Nordic Investment Bank (NIB)
21) OPEC Fund for International Development (OPEC Fund)
22) Organization for Economic Co-operation and Development (OECD)
23) Organization of Petroleum-Exporting Countries (OPEC)
24) West African Development Bank (BOAD)
25) World Bank Group
    ա. International Bank for Reconstruction and Development (IBRD)
    բ. International Development Association (IDA)
    գ. International Finance Corporation (IFC)
    դ. Multilateral Investment Guarantee Agency (MIGA)
    ե. International Centre for Settlement of Investment Disputes (ICSID)

Չև թիվ 18.2-ը լրացվել է 29.05.08թ. թիվ 145Ն որոշմամբ

Չև թիվ 21

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արժեթղթերի թողարկման արդյունքների վերաբերյալ

առ ___ _____ 200_ թ.

_____

(վարկային կազմակերպության լրիվ անվանումը)

Արժեթղթերի գրանցման հայտարարագիրը գրանցվել է Հայաստանի Հանրապետության արժեթղթերի հանձնաժողովում՝

___ _____ 200_ թ.

Որոշման համարը՝ _____

Տեղաբաշխումը սկսելու ամսաթիվը՝ ___ _____ 200_ թ.

Տեղաբաշխումն ավարտելու ամսաթիվը՝ ___ _____ 200_ թ.

Կուտակման հաշվի համարը՝ _____

Թողարկման ավարտից հետո վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալը կազմում է _____դրամ:

Կրժեթղթի տեսակը և ընդհանուր տարատեսակը	Թողարկման ծավալը անվանական արժեքով		Թողարկված արժեթղթերի քանակը	Մեկ արժեթղթի անվանական արժեքը		Փաստացի տեղաբաշխված արժեթղթերի քանակը	Տեղաբաշխման ընդհանուր ծավալը անվանական արժեքով		
	դրամ	արտարժույթ	հատ	դրամ	արտարժույթ	հատ	դրամ	արտարժույթ	արժեթղթերի կիսախարկնման հաշվին

Արժեթղթերի տեղաբաշխմանը մասնակցող կազմակերպությունների լրիվ անվանումները	Հասցեն	Վճարված միջնորդավճարը

Անվանական արժեթղթերի սեփականատերերի կենտրոնացված գրանցումը վարում է _____----------
(լիազորված իրավաբանական անձի լրիվ անվանումը)

Հասցեն_____

Բաժնետոմսերի տեղաբաշխման ավարտից հետո

Վարկային կազմակերպության խորհրդի անդամներ	Պաշտոնը	Խորհրդի անդամին պատկանող բաժնետոմսերի քանակը	
		վարկային կազմակերպությունում	վարկային կազմակերպությունից դուրս

Վարկային կազմակերպության վարչության անդամներ	Պաշտոնը	Վարչության անդամին պատկանող բաժնետոմսերի քանակը	
		վարկային կազմակերպու-թյունում	վարկային կազմա-կերպու-թյունից դուրս

Վարկային կազմակերպության վարչության նախագահ _____

Կ.Տ. (գործադիր տնօրեն)

Գլխավոր հաշվապահ _____

Ձև թիվ 22

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Վարկային կազմակերպության կողմից թողարկված արժեթղթերի և
կատարված ներդրումների վերաբերյալ

200 թ.

_____

(վարկային կազմակերպության լրիվ անվանումը)

Վարկային կազմակերպության կողմից թողարկված

արժեթղթերի մասին հաշվետվությունն

ըստ թողարկումների

Արժեթղթի տեսակը և տարատեսակը (թողարկում N)	Արժեթղթի պետական գրանցման համարը	Գրանցման ամսաթիվը	Փաստացի տեղաբաշխված արժեթղթերի քանակը	Տեղաբաշխման ընդհանուր ծավալը անվանական արժեքով	Արժեթղթերի թողարկումից ստացված հասույթը	Հաշվետու տարում արժեթղթերի դիմաց վճարված գումարները

			հատ	դրամ	արտար-ժույթ	դրամ	արտար-ժույթ	դրամ	արտար-ժույթ

Արժեթղթի տեսակը և տարատեսակը (թողարկում N)	Բորսաների ցանկը, որոնք գնանշել են արժեթղթերը	Արժեթղթերով գործառնությունների ընդհանուր ծավալը	Արժեթղթերի նվազագույն գինը	Արժեթղթերի առավելագույն գինը

Այն իրավաբանական անձանց ցուցակը, որոնց կանոնադրական հիմնադրամում վարկային կազմակերպությունը տնօրինում է 10%-ից ոչ պակաս բաժնեմաս

Իրավաբանական անձանց լրիվ անվանումը	Գտնվելու վայրը (քաղաք, պետություն)	Վարկային կազմակերպության բաժինը կանոնադրական կապիտալում

Այն իրավաբանական անձանց ցուցակը, որոնց կանոնադրական կապիտալում վարկային կազմակերպությունը տնօրինում է 10%-ից պակաս բաժնեմաս

Կազմակերպության լրիվ անվանումը	Գտնվելու վայրը (քաղաք, պետություն)

Տեղեկություններ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության և

դատարանի կողմից հաշվետու տարվա ընթացքում վարկային կազմակերպության նկատմամբ կիրառված պատժամիջոցների մասին

Պատժամիջոցի կիրառման ամսաթիվը	Կիրառող մարմինը	Պատճառը	Տեսակը	Չափը	Կատարման աստիճանը հաշվետվության ներկայացման օրը

Վարկային կազմակերպության վարչության նախագահ

Կ.Տ. (գործադիր տնօրեն)

Գլխավոր հաշվապահ

(Ձև թիվ 22-ը փոխ. 04.11.08թ. թիվ 298Ն)

Ձև թիվ 24-ը ուժը կորցրել է 08.11.08թ. թիվ 298Նորոշմամբ:

Հավելված 33-ը լրացվել է 08.09.09թ. թիվ 268Ն որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատվել է 21.12.10թ. թիվ 343Ն որոշմամբ, հանվել է 29.05.12թ. թիվ 145Ն որոշմամբ